ԼԳԲՏ ԱՆՁԱՆՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 2022 Թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ

ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Շապիկի պատկերը հանրային հրապարակված լուսանկար է,
առնչվում է էջ 51-ում ներկայացված դեպքին:

Տարեկան զեկույց. ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների վիճակը Հայաստանում 2022 թ. ընթացքում

Կազմել է «Փինք» իրավապաշտպան ՀԿ-ն՝ Շվեդիայի ֆինանսական աջակցությամբ (մայիս, 2023 թ.):
Նյութի բովանդակության համար պատասխանատու են հեղինակները, և այն պարտադիր չէ, որ արտահայտի Շվեդիայի կառավարության տեսակետները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 4

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 6

ԲԱԺԻՆ 1. ԼԳԲՏ ԱՆՁԱՆՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ 8

Պետության պարտավորությունները մարդու իրավունքների ապահովման և խտրականության կանխարգելման ուղղությամբ 9

ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՁԵՐԾ ԼԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ 12

ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ 15

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ 17

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ 20

ՄԱՍՆԱՎՈՐ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԳԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ 24

Սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով ֆիզիկական բռնություն 26

Գենդերային ինքնության և արտահայտման հիմքով բռնություն 27

Լիազորությունների չարաշահում իրավապահ մարմինների կողմից 31

Ընտանեկան բռնության դեպքեր 34

ԲԱԺԻՆ 2. ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ԼԳԲՏ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ 38

Ատելության խոսքի կարգավորումները 39

Ներպետական իրավակարգավորումները 42

ԼԳԲՏ անձանց խնդիրների շահարկումը և ատելության խոսքը 2022 թ.-ի ընթացքում 43

Երիտասարդների ինքնասպանությունը և հանրային արձագանքը 51

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 56

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 60

ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ[1]

Բիսեքսուալ (երկսեռական)	Անհատ, որը զգացմունքային և/կամ սեռական գրավչություն ունի մեկից ավելի սեռերի/գենդերների նկատմամբ:
Գեյ	Նույնասեռական տղամարդ, որը խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջություն, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերություններ և/կամ հարաբերությունների ցանկություն ունի տղամարդու հետ:
Գենդերային արտահայտում	Անձի իր իսկ (կամ այլոց կողմից ընկալվող) գենդերային ինքնության դրսևորումը:
Գենդերային ինքնություն	Անհատի իր իսկ գենդերի ընկալումն է և անհատական փորձը, որը կարող է համապատասխանել կամ չհամապատասխանել ծննդյան ժամանակ հաստատված սեռին: Այն սոցիալական ինքնության կատեգորիա է և վերաբերում է անհատի նույնականացմանը որպես տղամարդ, կին կամ այլ գենդեր:
Լեսբի	Նույնասեռական կին, որը խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջություն, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերություններ և/կամ հարաբերությունների ցանկություն ունի կնոջ հետ:
Սեռ	Անհատի կենսաբանական ստատուսն է որպես արական, իգական կամ ինտերսեքս: Որոշվում է այնպիսի չափորոշիչներով, ինչպիսիք են սեռական քրոմոսոմները, գոնադները, արտաքին ու ներքին սեռական օրգանները: Օգտագործվում է նաև որպես անձի ծննդյան պահին արձանագրված սեռ:
Հետերոսեքսուալ (տարասեռական)	Անհատ, որը խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջություն, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերություններ և/կամ հարաբերությունների ցանկություն ունի այլ գենդերի անձանց հետ:
Նույնասեռական	Անհատ, որը խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջություն, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերություններ և/կամ հարաբերությունների ցանկություն ունի նույն սեռի և/կամ գենդերի անձանց հետ:

1 Սույն եզրույթների հիմնական աղբյուրը՝ «ԼԳԲՏ անձանց հետ աշխատանքի ուղեցույց օգնող մասնագետների համար», «Փինք» իրավապաշտպան ՀԿ, 2021 թ. https://www.pinkarmenia.org/wp-content/uploads/2021/10/specialists-guideline-2021.pdf

Հոմոֆոբիա	Վախ, անհիմն զայրույթ, անհանդուրժողականություն և/կամ ատելություն նույնասեռականության նկատմամբ:
Սեռական կողմնորոշում	Անհատի խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջությունը, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերությունները և/կամ հարաբերությունների ցանկությունը այլ անհատի հետ:
Տրանս կամ տրանսգենդեր	Անձ, ում գենդերային ինքնությունը և/կամ գենդերային արտահայտումը տարբերվում է ծննդյան պահին հաստատված սեռից, և ներառում է տրանսսեքսուալ անցյալով կանանց և տղամարդկանց, տրանսսեքսուալ նույնականացող անձանց, տրանսգենդեր անձանց, հագուստափոխ անձանց և այլն: Հովանի եզրույթ է և ներառական է տրանսգենդեր, տրանսեքսուալ և այլ ոչ բինար գենդերային ինքնություն ունեցող անձանց համար:
Տրանսֆոբիա	Բացասական մշակութային և անձնական համոզմունքներ, կարծիքներ, վերաբերմունք և վարքագծեր, որոնք հիմնված են տրանս անձանց կամ գենդերային ինքնության և գենդերային արտահայտումների վարիացիաների հանդեպ նախապաշարումների, զզվանքի, վախի և/կամ ատելության վրա:
ՍԿԳԻ	Սեռական կողմնորոշում և գենդերային ինքնություն և/կամ գենդերային արտահայտում
ԼԳԲՏ	Լեսբի, գեյ, բիսեքսուալ և տրանսգենդեր
ՄԻԵԴ	Մարդու իրավունքների եվրոպական դատարան
ԵԽ	Եվրախորհուրդ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2022 թ.-ի ընթացքում սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականության դեպքերը չեն նվազել: Նկարագրված դեպքերը արտահայտում են ԼԳԲՏ անձանց նկատմամբ վերաբերմունքի ոչ ամբողջական պատկերը, քանի որ խտրականությունից տուժող անձինք մի կողմից հաճախ չեն դիմում իրավապաշտպան կազմակերպություններին, մյուս կողմից էլ ոչ միշտ են նույնականացնում իրենց նկատմամբ խտրական վերաբերմունքը:

Սույն զեկույցի առաջին մասում ամփոփ ներկայացված են այն իրավախախտումները, որոնց մասին հայտնել են «Փինք» իրավապաշտպան ՀԿ-ի շահառուները, և որոնց պատճառը եղել է տուժող անձանց սեռական կողմնորոշումը կամ գենդերային ինքնությունը: Ներկայացված են իրավախախտումների միայն այն դեպքերը, որտեղ ենթադրյալ իրավախախտի ատելության շարժառիթը տեսանելի է որոշակի ցուցիչներով, ինչիպիսիք են, օրինակ արտահայտությունները, հանցագործության վայրը, տուժողի ինքնարտահայտումը և այլ հանգամանքներ:

Իրավախախտումների հետևանքով ոտնահարվել են տուժածների՝ խոշտանգումներից և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու, անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի, աշխատանքի, կրթության իրավունքները: Իրավախախտների գործողությունների արդյունքում հաճախ խախտվել են տուժողների միաժամանակ մի քանի իրավունքներ:

Պետք է նշել, որ չնայած ԼԳԲՏ անձանց նկատմամբ իրավախախտումները համատարած են, սակայն ԼԳԲՏ անձինք խուսափում են դիմել իրավապահ մարմիններին իրենց իրավունքների պաշտպանության խնդրով: Արձանագրված 45 դեպքերից միայն 16-ով են տուժողները դիմել իրավապահ մարմիններին:

Ոստիկանությանը կամ այլ մարմնի դիմումներ և հաղորդումներ ներկայացնելուց խուսափելը ԼԳԲՏ անձինք բացատրում են մի քանի հիմնական պատճառներով.

- *չեն վստահում իրավապահ մարմիններին, մասնավորապես՝ ոստիկանության աշխատակիցներին, կարծում են՝ իրենց գործերը քննվում են ոչ օբյեկտիվորեն,*
- *արդյունավետ չեն համարում իրավական պաշտպանության մեխանիզմները, քանի որ իրավակիրառ մարմինների կողմից հաճախ արժանացել են կրկնազոհացման և/կամ խտրականությամբ զուգորդված նվաստացուցիչ վերաբերմունքի,*
- *մտավախություն ունեն, որ իրենց նկատմամբ իրականացված հանցագործության, իրենց կողմնորոշման և ինքնության մասին տվյալները կհանրայնացվեն իրավապահ մարմինների կողմից,*
- *իրենց պաշտպանված չեն զգում հանցավորներից և վախենում են նրանց հաշվեհարդարից:*

Պետք է նշել, որ բարձրաձայնված մտավախությունները, իրավամբ, տեղին են. ԼԳԲՏ անձինք խտրականության են արժանանում ոստիկանության աշխատակիցների կողմից, նրանց անձնական տվյալները բացահայտվում են այլ աշխատակիցներին, ինչպես նաև դիմողների ընտանիքի անդամներին: Սույն զեկույցում տեղ գտած իրավախախտումների շարքում կարելի է հանդիպել նաև իրավակիրառ մարմինների կողմից իրենց լիազորությունների անցման դեպքեր: Խտրականությամբ զուգորդված իրավախախտումների դեմ բողոքները մեծամասամբ ընթացք չեն ստանում. քրեական գործերը կարճվում են կամ գործի քննությունն անպատճառ ձգձգվում է:

Կազմակերպության կողմից արձանագրված դեպքերը ցույց են տալիս, որ Հայաստանի Հանրապետությունը թերացել է ԼԳԲՏ անձանց խտրականությունից պաշտպանելու իր պարտականությունները կատարելու գործում. ԼԳԲՏ անձանց իրավունքները խախտվել են թե՛ պետական մարմինների և թե՛ մասնավոր անձանց կողմից, իսկ խախտված իրավունքները հնարավոր չի եղել վերականգնել օրենսդրական բացերի և իրավակիրառ մարմինների կողմնակալ վերաբերմունքի պատճառով:

ԲԱԺԻՆ 1.
ԼԳԲՏ ԱՆՁԱՆՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

Պետության պարտավորությունները մարդու իրավունքների ապահովման և խտրականության կանխարգելման ուղղությամբ

Մարդու իրավունքները համընդհանուր են, անքակտելի և անփոխանցելի: Յուրաքանչյուր անձ իր ծննդյան պահից մինչև մահ օժտված է մարդու իրավունքներով և ազատություններով՝ անկախ որևէ անձնական կամ սոցիալական հանգամանքից: Հայաստանի Հանրապետությունը՝ որպես իրավական պետություն, պետք է ապահովի իր տարածքում գտնվող բոլոր անձանց իրավունքների անխափան իրացումը: Միևնույն ժամանակ, պետության կողմից մարդու իրավունքների իրացման ապահովումը ենթադրում է ոչ միայն պետական օղակների գործունեության վերահսկում, դրանց կողմից մարդու իրավունքների խախտումների կանխարգելում, այլ նաև պատշաճ արձագանք երրորդ անձանց կողմից դրսևորվող ոտնձգություններին: Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային փաստաթղթերը, դրանց հիման վրա գործող դատական կամ արտադատական ատյաններն ու այլ մեխանիզմները իրենց պրակտիկայում զարգացրել են այն միջոցառումները, որոնք պետության կողմից պետք է ձեռնարկվեն մարդու իրավունքների իրացումն ապահովելու համար: Այդ միջոցառումները ենթադրում են մի կողմից նեգատիվ պարտավորություններ, երբ պետությունը պետք է ձեռնպահ մնա մարդու իրավունքների և ազատությունների նկատմամբ որևէ ոտնձգությունից, և մյուս կողմից՝ պոզիտիվ պարտավորություններ, երբ պետությունը պետք է ձեռնարկի մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված քայլեր: Այսպիսով՝

Պետությունը պարտավոր է հարգել մարդու իրավունքները, այսինքն՝ զերծ մնալ մարդու իրավունքների ոտնահարումներից (պետության նեգատիվ պարտականությունը): Անհատի իրավունքների խախտումներ չպետք է թույլ տրվեն պետական մարմինների, ներառյալ՝ իրավապահ մարմինների աշխատակիցների և պետական լիազորությամբ օժտված այլ անձանց կողմից:[2]

Պետությունն ունի նաև պոզիտիվ պարտավորություն՝ **պաշտպանելու անհատի իրավունքները երրորդ անձանց խախտումներից:** Այս պարտավորության ներքո պետությունը պետք է կանխի անհատի իրավունքների խախտումները տարբեր ֆիզիկական անձանց, կազմակերպությունների կողմից: Սա իրենից ենթադրում է նաև գործուն իրավական մեխանիզմների ստեղծում իրավունքների խախտումները արդյունավետ քննելու, խախտված իրավունքները վերականգնելու, խախտմամբ պատճառված վնասները հատուցելու ուղղությամբ:

Պետության հաջորդ պոզիտիվ պարտավորությունը **իրավունքների իրացման միջավայր ստեղծելն է:** Պետական իշխանությունը պետք է ձևավորի այնպիսի իրավական մեխանիզմներ և հասարակական միջավայր, որտեղ անձինք կկարողանան անխոչընդոտ իրացնել իրենց հիմնարար ազատությունները:

ՀՀ-ում մարդու իրավունքների պաշտպանության առաջնային երաշխավորը երկրի բարձրագույն օրենքն է՝ ՀՀ Սահմանադրությունը, որը ամրագրում է, որ մարդու իրավունքները գործում են անմիջականորեն:[3] ՀՀ-ում մարդու իրավունքների գերակայությունը միաժամանակ ճանաչված է միջազգային պայմանագրերով և դաշնագրերով, որոնք վավերացվել են պետության կողմից: Այդպիսի

2 ՀՀ սահմանադրություն, 2015 թ. փոփոխություններով, հոդված 3. https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=143723
3 Նույն տեղում, հոդված 3, կետ 3

միջազգային փաստաթղթերը ավելի բարձր իրավաբանական ուժ ունեն, քան երկրում գործող օրենսգրքերը, օրենքները, այլ նորմատիվ իրավական ակտերը:[4]

Հայաստանի Հանրապետությունը, անդամակցելով միջազգային կազմակերպություններին, ինչպիսիք են Միավորված ազգերի կազմակերպությունը և Եվրոպայի խորհուրդը, ինչպես նաև վավերացնելով այդ կազմակերպությունների շրջանակներում մշակված փաստաթղթերը, ստանձնել է հստակ պարտավորություններ, որոնց կատարման ուղղությամբ պարբերաբար հաշվետու է համապատասխան մարմինների առաջ: Մասնավորապես, ՄԱԿ-ի շրջանակներում գործում են մարդու իրավունքների պայմանագրային մարմինները՝ 10 կոմիտեները, որոնք ձևավորվել են տարբեր իրավունքների վերաբերյալ դաշնագրերի հիման վրա: Կոմիտեները դիտարկում են ոչ միայն ներկայացվող զեկույցները, այլ նաև քննում են անհատական դիմումներ մասնավոր անձանցից՝ իրենց իրավունքների խախտումների վերաբերյալ: ՄԱԿ-ի շրջանակներում են գործում նաև հատուկ ընթացակարգերը և անկախ փորձագետները, որոնք իրենց մանդատի շրջանակներում կարող են տեղեկատվություն պահանջել պետությունից մարդու իրավունքների իրավիճակի և ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ: Պետության կողմից ձեռնարկված միջոցառումների արդյունավետության կամ ձախողումների վերաբերյալ զեկույցներ այս մարմիններին կարող են ներկայացվել նաև հասարակական կազմակերպությունների կողմից: Ներկայացված տեղեկատվության և դրան հաջորդող քննարկումների հիման վրա պետությանն են ներկայացվում առաջարկներ՝ առկա խնդիրների վերացման ուղղությամբ անհրաժեշտ քայլերի շուրջ: 2022 թ.-ի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում կանանց իրավունքների իրավիճակը քննվել է ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով կոմիտեի շրջանակներում, որը դիտարկել է նաև լեսբի, բիսեքսուալ և տրանսգենդեր կանանց իրավունքների իրավիճակը և պետությանն է ներկայացրել առաջարկներ՝ վերջիններիս խնդիրների առանձնահատկություններից բխող խախտումները վերացնելու նպատակով:[5] Ստորև ներկայացվում են Կոմիտեի առաջարկներն այս ուղղությամբ.

Կոմիտեն մտահոգված է լեսբի, երկսեռական, տրանսգենդեր և ինտերսեքս կանանց նկատմամբ խտրականության, ոտնձգությունների և ատելության խոսքի վերաբերյալ զեկույցներով և գենդերի վերահաստատման վիրահատության ու գենդերի իրավական ճանաչման օրենսդրական կարգավորումների բացակայությամբ, ինչպես նաև ԼԲՏԻ կանանց հետ աշխատող բուժանձնակազմի համար վերապատրաստումների բացակայությամբ:

Կոմիտեն պետությանն առաջարկում է՝

- *ընդունել օրենսդրական և քաղաքականության միջոցառումներ՝ ընդդեմ լեսբի, բիսեքսուալ և տրանսգենդեր կանանց և ինտերսեքս անձանց նկատմամբ բռնության ու խտրականության, ներառյալ ատելության խոսքը և ֆիզիկական, բանավոր ու էմոցիոնալ չարաշահումը,*
- *պաշտպանել լեսբի, բիսեքսուալ և տրանսգենդեր կանանց և ինտերսեքս անձանց մարդու իրավունքները կոնվենցիայով նախատեսված բոլոր ոլորտներում և վարել իրազեկվածության բարձրացմանն ուղղված գործունեություն՝ հասցեավորելով հասարակության շրջանում նրանց նկատմամբ խարանը,*

4 ՀՀ սահմանադրություն, 2015 թ. փոփոխություններով, հոդված 5, կետ 3
5 CEDAW/C/ARM/CO/7 https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CEDAW%2FC%2FARM%2FCO%2F7&Lang=en

- *ապահովել տրանսգենդեր անձանց, ներառյալ՝ կանանց իրավունքը փոխելու իրենց գենդերի վերաբերյալ նշումը անձնագրում և այլ անձը նույնականացնող փաստաթղթերում,*
- *ապահովել, որ լեսբի, երկսեռական և տրանսգենդեր կանայք կարողանան ազատորեն մասնակցել քաղաքական և հանրային կյանքում՝ իրացնելով իրենց խաղաղ հավաքների ազատությունը՝ առանց ահաբեկումների և հաշվեհարդարների:*

Եվրոպայի խորհրդի ամենաարդյունավետ գործիքներից մեկը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, որն ունի նաև իր վճիռների կատարման մեխանիզմներ, այն մարմիններից է, որի դիտարկումների հիման վրա Հայաստանի Հանրապետությունում իրականացվել են օրենսդրական փոփոխություններ: 2022 թ.-ի ընթացքում Եվրոպական դատարանի կողմից կայացվեց Հայաստանի Հանրապետության կողմից սեռական կողմնորոշման հիմքով մարդու իրավունքների խախտման մասին առաջին վճիռը:[6] Եվրոպական դատարանը, մասնավորապես, քննելով Օգանեզովան ընդդեմ Հայաստանի դիմումը, գտել է, որ՝

- այն իրավիճակը, որում դիմումատուն հայտնվել է հրկիզմամբ ուղեկցված հարձակման հետևանքով, ինչպես նաև նրա անձի նկատմամբ հոմոֆոբ ատելության շարժառիթով պայմանավորված հետագա հարձակումները պետք է նրա մոտ անխուսափելիորեն առաջացրած լինեին վախի, տագնապի և անապահովության զգացումներ, որոնք անհամատեղելի են նրա մարդկային արժանապատվության հետ և, հետևաբար, 3-րդ հոդվածի իմաստով հասել են ծանրության շեմին ՝ Կոնվենցիայի 14-րդ հոդվածի հետ համակցությամբ,
- իշխանությունները չեն կատարել արդյունավետ կերպով քննություն իրականացնելու իրենց դրական պարտավորությունը՝ պարզելու համար, թե արդյո՞ք ակումբի վրա հրկիզմամբ ուղեկցված հարձակումը, որը պայմանավորված է եղել դիմումատուի սեռական կողմնորոշմամբ, հոմոֆոբ շարժառիթով կատարված հանցագործություն է,
- իշխանությունները պատշաճորեն քննություն չեն իրականացրել դիմումատուի՝ հոմոֆոբ շարժառիթով պայմանավորված վիրավորանքի վերաբերյալ պնդումների առնչությամբ,
- սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը դեռևս ներառված չեն ատելության խոսքի հանցագործության զոհերի բնութագրերում՝ չնայած համապատասխան միջազգային մարմինների՝ այդ առնչությամբ արված առաջարկություններին. իշխանությունները պատշաճ կերպով չեն արձագանքել հոմոֆոբ բնույթի ատելության խոսքին, որի անմիջական թիրախն է եղել դիմումատուն՝ իր սեռական կողմնորոշման պատճառով:

Հայաստանի Հանրապետությունը այժմ գտնվում է Դատարանի վճռի կատարման փուլում, որի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինը Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն է: Վճռի կատարումից բխող անհրաժեշտ գործողությունների առաջարկները, որոնք ներկայացվել են նաև Նախարարների կոմիտեին, զետեղված են սույն զեկույցի՝ պետությանն ուղղված առաջարկների բաժնում:

6 Օգանեզովան ընդդեմ Հայաստանի (գանգատներ թիվ 71367/12 եւ 72961/12) https://hudoc.echr.coe.int/eng?i=001-219523

ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԶԵՐԾ ԼԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 29[7]

Խտրականությունից զերծ լինելու իրավունքը մարդու բացարձակ իրավունք է և ենթակա չէ որևէ սահմանափակման: Այն ճանաչված է ինչպես մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված միջազգային փաստաթղթերով, այնպես էլ ՀՀ Սահմանադրությամբ:

Մարդու իրավունքների վերաբերյալ բոլոր գլխավոր փաստաթղթերը ևս սահմանում են մարդու իրավունքների՝ առանց խտրականության իրացվելու հնարավորությունը: Դրանով ընդգծվում է անձի՝ խտրականությունից զերծ լինելու իրավունքի համամարդկային և արժեքավոր էությունը:[8]

Միջազգային իրավունքում խտրականությունը բնութագրվում է որպես ցանկացած բացառում, տարբերակում կամ նախապատվություն, որը հիմնված է կոնկրետ հանգամանքի կամ հատկանիշի վրա, և որը նպատակ ունի սահմանափակել անձի իրավունքների և ազատությունների ճանաչումը կամ իրացումը կամ հանգեցնում է նման սահմանափակումների:[9] Այլ կերպ ասած՝ խտրականությունը նույնանման իրավիճակում գտնվող անհատների նկատմամբ տարբերակված վերաբերմունքն է առանց որևէ ողջամիտ կամ օբյեկտիվ հիմքի:[10]

Միջազգային իրավունքում որպես խտրականության տեսակ առանձնացվում է ուղղակի խտրականությունը, երբ անհատը տարբերակված վերաբերմունքի է արժանանում նման իրավիճակում գտնվող այլ անձանց համեմատությամբ, ինչի պատճառը տվյալ անհատի որևէ անձնական, սոցիալական կամ այլ բնույթի հատկանիշն է:[11] Անուղղակի խտրականությունը առերևույթ չեզոք դրույթ է, չափանիշ կամ գործելակերպ, որը կարող է որևէ խմբի անձանց համար որոշակի անշահավետ պայմաններ ստեղծել այլոց համեմատ:[12] Մեկ այլ տեսակ է ասոցացված խտրականությունը, երբ խտրական վերաբերմունքի է արժանանում այն անձը, ով չնայած չունի խտրականությունից պաշտպանվող հատկանիշը,

7 ՀՀ Սահմանադրություն https://www.primeminister.am/hy/constitution/
8 Տե՛ս Articles 1 (3) and 55 of the UN Charter, Article 7 of UDHR. Article 2, 4 (1) and 26 of ICCPR, Article 2 of ICESCR, Article 2 of CRC, Article 14 of ECHR, Protocol No. 12 of the ECHR
9 Տե՛ս HRC, General Comment No. 18, § 7
10 Տե՛ս ECtHR, Judgement of 23 July 1968, Case of Certain Aspects of the laws on the Use of Languages in Education in Belgium. Willis v. United Kingdom, No. 36042/97, § 48, ECtHR 2002-IV, Virabyan v. Armenia, No. 40094/05, 02/01/2013
11 Տե՛ս Non-Discrimination in International Law A Handbook for Practitioners, 2011 Edition, p. 17-18
12 Տե՛ս Council Directive 2000/43/EC of 29 June 2000 implementing the principle of equal treatment between persons irrespective of racial or ethnic origin, (b) point of Article 2 (2)

սակայն կապված է այդ հատկանիշը կրող անձի հետ,[13] օրինակ՝ նրա ամուսինը, մայրը, հայրը և այլոք:

Խտրականությունը պայմանավորվում է անձի հատկանիշով, որը կոչվում է խտրականության հիմք: Ո՛չ ՀՀ Սահմանադրությունը և ներպետական օրենքները, ո՛չ միջազգային պայմանագրերի մեծ մասը ուղղակիորեն չեն նախատեսում ՍԿԳԻ-ն խտրականությունից պաշտպանվող հիմքերի մեջ: Այնուամենայնիվ, ներպետական օրենսդրության մեջ խտրականությունից պաշտպանվող հիմքերի ցանկը բաց է. իրավական ակտերը չեն բացառում ուղղակիորեն նախատեսված հիմքերից զատ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներ, որոնք կարող են տարբերակված վերաբերմունքի թիրախ հանդիսանալ: Սա նշանակում է, որ սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը կարող են և պետք է դիտարկվեն որպես անձնական և սոցիալական այլ բնույթի հանգամանքներ և հավասարաչափ պաշտպանվեն խտրականությունից, ինչպես սեռը, ռասան, հաշմանդամությունը: Մարդու իրավունքների պայմանագրերի վրա գործող մարմինները բազմիցս վերահաստատել են այս պնդումը՝ սահմանելով, որ սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը ամբողջությամբ տեղավորվում են խտրականությունից պաշտպանվող հատկանիշների շարքում:[14]

Այսպիսով՝ Հայաստանի Հանրապետությունը պետք է հարգի անձի՝ խտրականությունից զերծ լինելու իրավունքը: Այն պետք է պաշտպանի ԼԳԲՏ անձանց պետական մարմինների ներկայացուցիչների՝ կառավարության, ոստիկանության, քննչական մարմինների աշխատակիցների ոտնձգություններից: Հավասարության ապահովումը միայն պետական մարմինների կողմից խախտումներից զերծ մնալը չէ, ուստի պետությունը պետք է ստեղծի այնպիսի միջավայր, որ մասնավոր անձանց կողմից ևս թույլ չտրվեն ԼԳԲՏ անհատների իրավունքների ոտնահարումներ՝ պայմանավորված վերջիններիս սեռական կողմնորոշմամբ կամ գենդերային ինքնությամբ: Դեռ ավելին, նման ոտնահարումների դեպքերը պետք է պատշաճ քննության արժանանան, իսկ ոտնձգողները՝ պատժվեն:

Միևնույն ժամանակ, չնայած նրան, որ խտրականության արգելքի վերաբերյալ դրույթներ են պարունակվում մի շարք ոլորտային օրենսդրական ակտերում, Հայաստանի Հանրապետությունում դեռևս չկա առանձին օրենք, որը կսահմանի խտրականության հասկացությունը, դրա տեսակները, արդյունավետ մեխանիզմ կնախատեսի խտրականության նկատմամբ առավել խոցելի խմբերի պաշտպանության համար: Մասնավորապես, արդյունավետ կիրառման հնարավորություն ընձեռող օրենքը նախ և առաջ պետք է՝

- նախատեսի խտրականությունից պաշտպանվող հատկանիշների շարքում սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության ներառումը՝ հաշվի առնելով անձանց այդ հատկանիշներով պայմանավորված իրավախախտումների ծավալը,
- նախատեսի խտրականության տեսակների համապարփակ ցանկը,
- նախատեսի դատական կարգով իրենց շահառուների իրավունքների պաշտպանության նպատակով դատարան դիմելու՝ հասարակական կազմակերպությունների իրավասուբյեկտություն,

13 Տե՛ս Molla Sali v. Greece [GC], 2018; Guberina v. Croatia, 2016, § 78; Škorjanec v. Croatia, 2017, § 55; Weller v. Hungary, 2009, § 37

14 Տե՛ս Identoba and Others v. Georgia, 2015, § 96; Salgueiro da Silva Mouta v. Portugal, 1999, § 28; Fretté v. France, 2002, § 32; Vejdeland and Others v. Sweden, 2012, § 55; Committee Against Torture, General Comment No.2: Implementatiol of Article 2 by State parties, § 21, 22

- նախատեսի անկախ հավասարության մարմնի ձևավորման կարգն ու գործառույթները,
- նախատեսի մասնավոր մարմինների կողմից դրսևորված խտրականությունից պաշտպանության հնարավորություն,
- նախատեսի խտրականության դեպքերի քննության ընթացքում ապացուցման բեռի բաշխման առանձնահատկություն, այն է՝ ենթադրյալ իրավախախտին պարտավորեցնի ապացուցել խտրական մոտիվի բացակայությունը:

Հարկ է նշել, որ խտրականության դեմ օրենքի նախագիծը շրջանառության մեջ է դրվել դեռևս 2016 թ.-ից, անցել է բազում մշակումներ թե՛ Արդարադատության նախարարության, թե՛ քաղաքացիական հասարակության կողմից, սակայն այդպես էլ չի ուղարկվել կառավարություն: Այնուամենայնիվ, նախագծի վերջնական տարբերակը չի արժանացել քաղաքացիական հասարակության հավանությանը՝ չհամապատասխանելով վերոնշյալ բոլոր դրույթներին:

Սույն զեկույցում տեղ գտած մարդու իրավունքների խախտումները զուգորդված են խտրականությամբ: Այսինքն՝ արձանագրված իրավախախտումները տեղի են ունեցել տուժողի սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության պատճառով:

Ստորև ներկայացված օրինակներում մարդու իրավունքների խախտումները տեսակավորված են ըստ իրավախախտումների, սակայն բոլորը զուգորդված են գենդերային ինքնության կամ սեռական կողմնորոշման հիմքով խտրականությամբ:

ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

1. Յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի առողջության պահպանման իրավունք:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 85

Առողջության իրավունքը մարդու հիմնարար իրավունքներից է: Չնայած նրան, որ առողջության իրավունքի ապահովման ստանդարտները նույնական չեն և կախված պետության զարգացվածության աստիճանից, տնտեսական վիճակից և ռեսուրսներից, կարող են լինել տարբեր, կան որոշակի սկզբունքներ, որոնք պետք է պահպանվեն՝ անկախ առողջապահական համակարգի ընդհանուր հնարավորություններից: Այդպիսի սկզբունքներից է խտրականության արգելքը: Այսինքն, անկախ նրանից, թե, ելնելով տվյալ պետության հնարավորություններից, առողջապահական ծառայությունների տրամադրման ինչպիսի համակարգ է գործում, ինչ ծավալով է պետությունը տրամադրում անվճար բուժօգնություն և ծառայությունների ինչ ծավալ է հասանելի, այն պետք է գործի յուրաքանչյուր անձի համար նույնական հիմունքներով և չպետք է որևէ կերպ սահմանափակվի՝ կախված անձի անձնական կամ սոցիալական որևէ հատկանիշից, ինչպիսին են, օրինակ՝ սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը:

Ստորև ներկայացված դեպքերում անձինք խտրականության են ենթարկվել բուժօգնություն և սպասարկում տրամադրող հաստատությունների կողմից:

Տրանս կինը, ով ցանկանում է սեռափոխության վիրահատություն անցնել, կապ է հաստատել իր նախընտրելի պլաստիկ վիրաբույժի հետ՝ դեմքի պլաստիկ վիրահատություն իրականացնելու համար: Նրանք որոշ հարցեր են քննարկել միասին, այնուհետև վիրաբույժը ցանկացել է տեսնել անձի լուսանկարները: Դիմողը ուղարկել է իր լուսանկարները և ուղարկել իր սոցիալական կայքի էջը: Դրանից հետո դիմողը և վիրաբույժը հեռախոսազրույց են ունեցել, որի ժամանակ դիմողը հայտնել է, որ ինքը տրանս անձ է, ցանկանում է սեռափոխվել: Բժիշկը սկսել է կոպիտ խոսել նրա հետ, խտրական արտահայտություններ է արել: Զանգից հետո, երբ դիմողը փորձել է կրկին կապ հաստատել բժշկի հետ, վերջինս չի պատասխանել զանգերին և նամակներին:

Անձը չի ցանկացել միջոցներ ձեռնարկել իր իրավունքների պաշտպանության նպատակով:

Բռնությունից տուժած տրանս անձը, ով դիմել էր բուժօգնության, ենթարկվել է անտարբեր վերաբերմունքի բուժանձնակազմի կողմից. նրան չեն տրամադրվել անհրաժեշտ իրերը, օրինակ՝ անվասայլ տեղափոխման համար: Բացի այդ, բուժանձնակազմը նվաստացուցիչ արտահայտություններ է հնչեցրել: Հիվանդանոցում բոլոր աշխատակիցները տեղյակ են եղել՝ որտեղ է գտնվում տրանս անձը, ինչը նշանակում է, որ նրա մասին տեղեկատվությունը տարածվել էր:

Խտրականությունը բժշկական հաստատություններում զուգորդվում է անձի առողջության իրավունքի խախտմամբ: Այսինքն՝ անձը զրկվում է պատշաճ բուժօգնություն և սպասարկում ստանալու հնարավորությունից պարզապես իր անձնական հատկանիշի պատճառով և հայտնվում է այլոց հանդեպ նվազ բարենպաստ իրավիճակում: Անձի իրավունքների իրացման այսպիսի ոտնահարումը կարող է հանգեցնել այլ խնդիրների, ինչպիսիք են՝ անձի հոգեկան ամբողջականության խախտումը, երբ անձը, ով ուներ բուժօգնության կարիք, իրեն զգում է էլ ավելի ճնշված, որն էլ իր հերթին կարող է վատթարացնել անձի ֆիզիկական առողջությունը: Հետևաբար, հատկապես անձի առողջության իրավունքին վերաբերող ոլորտում խտրականության դրսևորումը կարող է զուգահեռաբար հանգեցնել մի շարք իրավունքների ոտնահարման: Քննարկվող առաջին դեպքում անձը դեռևս չի օգտվել բուժօգնությունից, նրան ի սկզբանե հրաժարվել են ծառայություն տրամադրել: Հետևաբար, եթե իր գենդերային ինքնությունը բացահայտվեր բուժօգնությունից օգտվելուց հետո և խտրականությունը դրսևորվեր մեկ այլ փուլում, դա կարող էր անձի համար առաջացնել լուրջ խնդիրներ՝ ընդհուպ մինչև ոչ բժշկական միջամտության հետևանքների նկատմամբ ոչ ամբողջական, ոչ պատշաճ վերահսկողություն: Քննարկվող երկրորդ օրինակում անձը խտրականության է բախվել արդեն բուժօգնություն ստանալու փուլում, ինչը ակնհայտորեն ծանրացրել է իր դրությունը այնպիսի իրավիճակում, երբ նա ուներ լրացուցիչ օգնության կարիք: Այսինքն, անձը ոչ միայն չի ստացել անհրաժեշտ օգնություն, այլ ենթարկվել է նվաստացուցիչ վերաբերմունքի և թողնվել է անօգնական վիճակում:

Այս պարագայում էական չէ, թե բուժհաստատությունը մասնավոր է կամ ոչ պետական. պետությունը պարտավոր է ստեղծել այնպիսի միջավայր, որ քաղաքացիները իրենց անձնական հատկանիշների պատճառով խտրականության չբախվեն՝ ընդունելով մի կողմից համապարփակ օրենսդրություն, մյուս կողմից՝ ապահովելով դրանց գործողության արդյունավետությունն ու վստահությունը իրավակիրառ համակարգի նկատմամբ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ

1. Յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ազատ ընտրության իրավունք:

2. Յուրաքանչյուր աշխատող ունի աշխատանքից անհիմն ազատվելու դեպքում պաշտպանության իրավունք: Աշխատանքից ազատման հիմքերը սահմանվում են օրենքով:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 57

ՀՀ Սահմանադրության համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ազատ ընտրության և աշխատանքից անհիմն ազատվելու դեպքում պաշտպանության իրավունք: Այս կարգավորումը մեզ հուշում է, որ յուրաքանչյուրը կարող է ընտրել իր ցանկացած մասնագիտությունը, զբաղվել իր նախընտրած աշխատանքով: Գործատուի և աշխատողի հարաբերությունները հիմնվում են կայունության սկզբունքի վրա, ուստի աշխատանքից առանց հիմքերի ազատման դեպքում աշխատակիցը կարող է դատական կարգով պաշտպանել իր իրավունքները: Որպես աշխատանքային հարաբերությունների կայունության երաշխիք՝ պետությունը աշխատանքից ազատման հիմքերի նախատեսումը չի թողնում կողմերի հայեցողությանը՝ խուսափելու համար կամայականություններից, այլ սահմանում է ՀՀ աշխատանքային օրենսգրքով:[15]

ԼԳԲՏ անձինք խտրականության են բախվում կյանքի տարբեր ոլորտներում: Նրանց նկատմամբ տարբերակված մոտեցումն ու նախապաշարումները, փաստորեն, վնաս են հասցնում ոչ միայն անձի հոգեբանական ամբողջականությանը, այլ նաև սոցիալական ապահովությանը: Մասնավորապես, անձանց կյանքի որակի վրա հատկապես ազդում է աշխատանքային իրավահարաբերություններում դրսևորվող խտրականությունը: Անձը կարող է կորցնել իր ապրուստի միջոցը ոչ թե իր մասնագիտական ոչ բավարար որակների կամ աշխատանքում թերացման պատճառով, այլ, ընդամենը, անձնական հատկանիշի: Ստորև ներկայացված են 2022 թ.-ին արձանագրված որոշ օրինակներ:

Նույնասեռական անձը աշխատում է սպասարկման ոլորտում: Դիմողի գործընկերները տեղեկացել են, որ դիմողը ունի տրանս ընկերներ և շփվում է նրանց հետ: Դրանից հետո գործընկերները սկսել են պարբերաբար ծաղրել դիմողին և ճնշումներ գործադրել նրա նկատմամբ՝ տրանս ընկերներ ունենալու համար, միաժամանակ կարծել են, որ դիմողը նույնպես ԼԳԲՏ անձանցից մեկն է, քանի որ շփվում է տրանս մարդկանց հետ: Որոշ ժամանակ անց գործատուն հայտնել է, որ դիմողի և մյուս աշխատակիցների հարաբերությունները լարում են աշխատանքային մթնոլորտը, ուստի դիմողը ազատված է աշխատանքից:

Անձը այդպես էլ ցանկություն չի հայտնել դիմելու իրավական պաշտպանության:

15 Տե՛ս ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդվածներ 109-114. https://www.arlis.am/documentview.aspx?docid=146722

Նույնասեռական անձը աշխատանքի է ընդունվել երևանյան բարերից մեկում՝ որպես մատուցող: Նա նշում է, որ աշխատանքի ընդունվելիս հաստատության տնօրենը մենեջերին հայտնել է, որ «նման անձը» չի կարող իրենց մոտ աշխատել՝ նկատի ունենալով նույնասեռականությունը: Սակայն մենեջերը կարողացել է համոզել տնօրենին և աշխատանքի ընդունել նրան: Մեկ ամիս աշխատելուց հետո անձին ազատել են աշխատանքից: Մենեջերը նրան հայտնել է, որ տնօրենը չի ցանկանում, որ «նման անձը» իր հաստատությունում աշխատի: Նա նշել է, որ իրենց մոտ գալիս են «իսկական հայ տղամարդիկ, և նրա նմանները չեն կարող սպասարկել այդ տղամարդկանց»: Երբ մենեջերը փորձել է պաշտպանել աշխատակցին՝ նշելով, որ նա շատ լավ է աշխատում, տնօրենն ասել է, որ «եթե այդքան շատ է պաշտպանում, կարող են իրար ձեռք բռնել և հեռանալ»: Տնօրենը երկուսին էլ ազատել է աշխատանքից:

Վերջին օրինակում գործ ունենք ոչ միայն ուղղակի խտրականության, այլ նաև ասոցացված խտրականության հետ, որը դրսևորվել է մենեջերի նկատմամբ, ով աշխատանքից ազատվել է ոչ թե իր հատկանիշի պատճառով, այլ ուրիշի, ում փորձել է պաշտպանել: Այսպիսով, աշխատանքային իրավահարաբերություններում խտրականությունը ոչ միայն ենթադրում է աշխատանքային իրավունքի խախտում, այլ նաև որպես հետևանք կարող է առաջացնել պատշաճ բնակարանային ապահովման և բավարար կենսապայմանների բացակայության:

Այս իրավիճակում պետությունը ձախողել է անձանց խտրականությունից պաշտպանելու իր պարտավորությունը: Չնայած նրան, որ աշխատանքային օրենսգրքով նախատեսված է խտրականության արգելքը, անձինք խուսափում են դիմել իրավական պաշտպանության միջոցների՝ հույս չունենալով, թե կարող են ապացուցել իրենց նկատմամբ գործատուի կողմից դրսևորված խտրականության փաստը: Հարկ է նշել, որ խտրականության դեմ համապարփակ օրենսդրության առկայության պարագայում խտրականությունից տուժած անձը չպետք է կրի իր նկատմամբ խտրականության փաստի ապացուցման պարտավորությունը: Նա պետք է ընդամենը ներկայացնի առաջին հայացքից խտրականության առկայությունը, իսկ այն, որ անձը խտրականության չի ենթարկվել, պետք է ապացուցի ենթադրյալ իրավախախտը: Այս սկզբունքը պայմանավորված է այն հանգամանքով, որ ենթադրյալ իրավախախտը տիրապետում է ապացուցողական նշանակություն ունեցող նյութերի, որոնցով հնարավոր է ապացուցել խտրականության բացակայությունը: Օրինակ՝ եթե անձը աշխատանքից ազատվել է իր մասնագիտական ոչ բավարար գիտելիքների պատճառով կամ թերացել է աշխատանքում կամ որևէ այլ կերպ խախտել է աշխատանքային պայմանագիրը, ապա դա հեշտությամբ կարող է ապացուցվել գործատուի կողմից: Այսպիսով, սովորաբար պրակտիկայում չափազանց դժվար է լինում վկայակոչել խտրականության կամ այլ իրավունքների ոտնահարումների առկայությունը, քանի որ ապացուցման բեռը կրում է աշխատողը: Միևնույն ժամանակ, խտրականության զոհ դարձած անձը գրեթե երբեք չի տիրապետում որևէ միջոցի՝ ապացուցելու համար, որ իրեն աշխատանքից ազատել են իր անձնական հատկանիշների պատճառով:

Մյուս կողմից, պետության պարտավորությունն է ձևավորել այնպիսի միջավայր, որտեղ մասնավոր անձինք կխուսափեն խտրականությունից՝ իմանալով, որ պետությունն ունի հստակ քաղաքականություն՝ պայքարելու ցանկացած տիպի

և ցանկացած հիմքով խտրականության դեմ և որ իրենց արարքը անպատժելի չի մնա: Այսինքն, պետությունը պետք է հանրային կերպով դատապարտի խտրականությունն ու ներկայացնի խտրականության կանխարգելման ուղղությամբ որդեգրված քաղաքականությունը: Այդ պարագայում անգամ ոչ ամբողջական օրենսդրական կարգավորումների հանգամանքը թույլ չի տա ծառայություն տրամադրողներին կամ գործատուներին ազատորեն խտրականության ենթարկել անձանց:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

1. Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Պարտադիր կրթության ծրագրերը և տևողությունը սահմանվում են օրենքով: Պետական ուսումնական հաստատություններում միջնակարգ կրթությունն անվճար է:

2. Յուրաքանչյուր ոք օրենքով սահմանված դեպքերում և կարգով ունի մրցութային հիմունքներով պետական բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում անվճար կրթություն ստանալու իրավունք:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 38

Կրթությունը հասարակության զարգացման երաշխիքն է: Ուստի հասարակության գիտակցությունը բարձրացնելու, նրա շարունակական զարգացումն ապահովելու համար պետությունն ունի պոզիտիվ պարտավորություն՝ ստեղծելու կրթության իրավունքի իրացման պայմաններ: ՀՀ Սահմանադրությունը ամրագրում է, որ յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Միևնույն ժամանակ՝ ոչ մեկին չի կարելի մերժել կրթության իրավունքը:[16] Կրթություն ստանալու իրավունքը ներառում է ոչ միայն դպրոցական (միջնակարգ) կրթությունը,[17] այլ նաև բարձրագույն ուսումնական հաստատություններում[18] (բուհ) սովորելը: Պետությունը, բարձրագույն ուսումնական հաստատություններին տալով ինքնակառավարման իրավունք[19] և կանխատեսելով սովորողի՝ ուսումնական հաստատությունից հեռացնելու հնարավորությունը, ամրագրում է, որ սովորողին ուսումնական հաստատությունից հեռացնելը կարող է իրականացվել այդ հաստատության ներքին ակտերով սահմանված դեպքերում և կարգով:[20] Այս կարգավորումը հանդես է գալիս որպես բուհում սովորող անձանց կրթության իրավունքի պաշտպանության լրացուցիչ երաշխիք:

Դիմողի համաձայնությամբ համացանցում հայտնվել է տեսանյութ, որտեղ վերջինիս շպարել է տրանս կնոջ: Տեսանյութի տարածումից հետո դիմողի դասընկերները սկսել են վատ վերաբերվել դիմողին և խտրական արտահայտություններ են հնչեցրել նրա հասցեին: Մասնավորապես, ասել են. «ղզիկ», «աղջկա նման ես հագնվում», շպարվելն անվանել են սրբապղծություն: Դասընկերները նման վիճաբանությունների ժամանակ նաև հրել և քաշքշել են դիմողին: Դիմողի խոսքերով՝ ուսուցիչները ևս սկսել են խտրական վերաբերվել իրեն, պարբերաբար ծնողներին հրավիրել են դպրոց՝ զրուցելու համար, ծնողներին հայտնել են տղայի նույնասեռական կողմնորոշման մասին: Դիմողը ստիպված է եղել 2 դպրոց փոխել, քանի որ 2 դպրոցում էլ ուսուցիչները և աշակերտները իր նկատմամբ խտրական վերաբերմունք են ցուցաբերել:

16 Տե՛ս Մարդու Իրավունքների և Հիմնարար Ազատությունների Պաշտպանության Մասին Կոնվենցիայի՝ Փոփոխված 11-րդ Արձանագրությամբ, Հոդված 2. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=20870
17 Տե՛ս Bahri SULAK v Turkey, No 24515/94
18 Տե՛ս Leyla Şahin v. Turkey [GC], § 141; Mürsel Eren v. Turkey, § 41
19 Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, 2015 թ. փոփոխություններով, հոդված 38, մաս 3-րդ
20 Տե՛ս ՀՀ օրենքը «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», հոդված 17, մաս 6-րդ. https://www.arlis.am/documentview.aspx?docid=103999

Անձը խուսափում է դասընկերների հետ ընդհարումից, այդ պատճառով չի ցանկացել իրավական պաշտպանության դիմել:

Դիմողը, որը նույնականանում է որպես տրանս տղա, սովորում է ավագ դպրոցում: Նրա ընկերները և դասընկերները դպրոցում նրան դիմում են իր նախընտրած անունով: Ուսուցիչներից մեկը, իմանալով դրա մասին, զրուցել է դիմողի հետ: Հետո տղան իմացել է, որ դպրոցի տնօրինությանը հայտնի է դարձել իր ինքնության մասին տեղեկությունը: Ավագ դպրոցի տնօրենը տղայի դասընկերներից մեկին ասել է, որ լսել է, թե դիմողը «շեղվել է»: Այնուհետև տնօրենը իր մոտ է կանչել տղային խնամողին՝ քրոջը, և հայտնել, որ «դպրոցում այդ հիվանդությունը թույլատրելի չէ»: Տնօրենը նաև նշել է, որ եթե այդպես շարունակվի, հնարավոր է՝ տղայի դասընկերների ծնողները բողոքեն, և իրենք ստիպված կլինեն տղային հեռացնել դպրոցից:

Նույնասեռական տղան քոլեջում պարբերաբար բուլիինգի է ենթարկվել իր համակուրսեցիների կողմից: Նրան անտեսել են, վիրավորական արտահայտություններ են արել նրա հասցեին, վիճաբանել են հետը, ծաղրել արտաքինը, օրինակ՝ ասելով. «ոտքերդ սափրո՞ւմ ես, իսկական տղան չի սափրում» և այլն: Քոլեջի ուսուցիչները և տնօրինությունը տեղյակ են եղել տղայի նկատմամբ համակուրսեցիների վերաբերմունքից, սակայն քայլեր չեն ձեռնարկել բուլիինգը կանխելու համար: Մի օր, երբ համակուրսեցիները նորից վիճաբանել են տղայի հետ և վիրավորել նրան, տղան ոստիկանություն է զանգահարել: Երբ նա դուրս է եկել քոլեջի հարակից շենքերի մոտ՝ ոստիկանության աշխատակիցներին դիմավորելու, նրան են մոտեցել քոլեջի այլ աշակերտներ՝10-12 հոգի՝ մոտ 17-19 տարեկան, վիրավորել են նրան՝ կապված սեռական կողմնորոշման հետ: Նրանցից մեկը մոտեցել է տղային, հարվածել ձեռքին և ոտքով հարվածներ հասցրել սրունքների հատվածում: Տղան փորձել է հանդարտեցնել վիճաբանությունը: Երբ ոստիկանները ժամանել են, նրանք բոլորով գնացել են քոլեջ, որտեղ ոստիկանները կոպիտ, բարձր և սաստող տոնով են խոսել տղայի հետ, չեն հավատացել նրա ասածներին, ասել են, որ նա «ձևեր է թափում»: Ընդհանուր զրույցի ընթացքում փոխտնօրենը բացահայտ ասել է, որ ինքը թույլ չի տալիս, որ նրան բռնության ենթարկեն, այլապես հենց այդ պահին էլ եթե թույլ տար, նրան ֆիզիկական բռնության կենթարկեին տարբեր տղաներ: Արդյունքում դիմողին հեռացրել են քոլեջից վատ վարքի համար:

Տուժողը չի ցանկանում շարունակել ուսումը, որովհետև իրեն պաշտպանված չի զգում:

Անչափահաս նույնասեռական տղային հեռացրել են քոլեջից: Նա փորձել է ընդունվել դպրոց՝ ուսումը շարունակելու նպատակով: Դպրոցի վարչակազմը տեղեկացել է քոլեջից դիմողին հեռացնելու պատճառների մասին, իսկ դիմողը ստիպված է եղել բացահայտել իր սեռական կողմնորոշումը: Զրույցի ընթացքում վարչակազմը դիմողին հայտնել է, որ նա չի կարող դպրոց գնալ ներկած մազերով, ինչպես նաև տարբերվող հագուստով, բացի այդ՝ վարչակազմը նշել է, որ մյուս աշակերտները չպետք է տեղյակ լինեն դիմողի կողմնորոշման մասին: Այնուամենայնիվ, հաջորդ օրը դպրոցի վարչակազմից զանգահարել են և

հայտնել, որ չեն ուզում, որ «նման անձը» իրենց դպրոցում սովորի՝ որպես պատճառ ներկայացնելով դիմողի արտաքինը և հագուստի անհամապատասխանությունը դպրոցին: Սակայն դիմողը նշում է, որ ինքը հագել էր սովորական հագուստ, նույն դպրոցում նկատել է բազմաթիվ աշակերտների նման հագուստով և ներկած մազերով:

Նույնասեռական տղամարդը սովորում է ռազմական ուսումնական հաստատությունում: Հաստատության ղեկավարությունը տեղեկացել է անձի սեռական կողմնորոշման մասին, ինչից հետո ուսումնական հաստատության վարչական կազմի ղեկավար աշխատակիցը կանչել և առանձին զրուցել է նրա հետ՝ ամոթանք տալով նույնասեռական լինելու համար, խոսել է կոպիտ տոնով, ասել, որ դա նորմալ չէ, և որ իրենք նրան «տղամարդ կդարձնեն»: Անձին սպառնացել են նաև, որ կհեռացնեն ուսումնական հաստատությունից, ինչից հետո կտանեն ժամկետային զինվորական ծառայության, բացի այդ՝ ստիպված կլինի վճարել իր ուսման վարձի կրկնակին, ինչը պարտավոր է պայմանագրով ուսումնական հաստատությունից հեռացվելու դեպքում:

Ուսումնական հաստատությունը անձի կողմնորոշման մասին հայտնել է տղայի ընտանիքի անդամներին: Դրանից հետո ընտանիքում տղայի նկատմամբ ճնշումներ են սկսվել՝ կապված նրա սեռական կողմնորոշման հետ, նաև նրան վնասելու սպառնալիքներ են հնչել: Վիճաբանություններ են եղել այն մասին, որ անձի սեռական կողմնորոշման բացահայտման պատճառով ընտանիքը ստիպված է լինելու այդքան գումար վճարել ուսումնական հաստատությանը: Անձը ստիպված է եղել կիսատ թողնել ուսումը և հեռանալ արտերկիր:

Նույնասեռական տղամարդը զինվորական ծառայություն պետք է անցներ ռազմաուսումնական ծրագրով: Այսինքն, նա մինչև զինվորական ծառայության մեկնելը շարունակում էր ուսանել, այնուհետև ծառայության էր մեկնելու զինվորական կոչումով:

Հերթական զորակոչի բուժզննման ընթացքում անձին ուղեկցել է հայրը: Բուժզննման ընթացքում անձին անձնական կյանքին վերաբերող և սեռական կողմնորոշման հետ կապված հարցեր են տվել: Անձը վախեցել է խոստովանել, որ նույնասեռական է, քանի որ նրա բոլոր պատասխանները բժիշկներից մեկը հայտնում էր նրա հորը: Բուժզննման ընթացքում անձին անընդհատ ասել են, որ ինքը քաջ չէ, թույլ է, չի կարող շարունակել ուսանել ռազմաուսումնական ծրագրով: Նրան նաև ուղիղ հարցրել են՝ արդյոք ինքը սեռական հարաբերություն ունեցե՞լ է կնոջ հետ: Անձը պատասխանել է, որ ունեցել է, սակայն ստել է՝ վախենալով, որ դրանով կբացահայտվի իր կողմնորոշումը, բացի այդ՝ դրա մասին կտեղեկացնեն իր հորը, ինչը ընտանեկան խնդիրներ կառաջացնի: Անձին ասել են, որ նման վարքագծով չի կարող ծառայել՝ հայտնելով, որ պատրաստվում են նրան «դուրս թողնել» այդ ծրագրից:

Սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության պատճառով կրթության իրավունքի խախտման դեպքերը 2022 թ.-ին գերազանցել են նախորդ տարիներին արձանագրված դեպքերի քանակը: Սա մի կողմից կարող է մտահոգիչ թվալ, սակայն կարելի է ենթադրել, որ պարզապես զեկուցվող տարվա ընթացքում

առավել շատ անձինք են իրենց կրթության իրավունքի խախտման մասին բարձրաձայնել: Կրթական հաստատությունը, հատկապես այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում է հանրակրթությանը, պետք է հանդես գա ոչ միայն որպես անձին կրթող և դաստիարակող, այլ նաև որևէ ոտնձգությունից պաշտպանող մարմին: Այսինքն, անկախ նրանից՝ ճնշումները կամ բռնությունը կլինեն համադասարանցիների, ընտանիքի կամ այլոց կողմից, դպրոցը պետք է հետևողական լինի անձի իրավունքների և հոգեբանական ամբողջականության վերականգնման ուղղությամբ: Այս գործառույթը հատկապես կարևոր է, քանի որ այս պարագայում տուժողները անչափահաս անձինք են, որոնք միշտ չէ, որ իրավական պաշտպանության մեխանիզմների մասին հասանելիություն կամ իրազեկվածություն ունեն: Հետևաբար, դպրոցը պետք է մի կողմից հավասարության, հարգանքի և հանդուրժողականության մշակույթ սերմանի աշակերտների շրջանում, իսկ մյուս կողմից՝ միջոցներ ձեռնարկի առավել խոցելիներին պաշտպանելու համար: Սակայն, ուսումնասիրելով վերը նկարագրված դեպքերը, ցավալիորեն պետք է նկատել, որ կրթական հաստատությունները ոչ միայն որևէ միջոց չեն ձեռնարկում անձի պաշտպանությունն ապահովելու ուղղությամբ, այլև ավելին՝ հենց իրենք են անմիջականորեն հանդիսանում իրավախախտ: Շատ դեպքերում տուժողները, դուրս մնալով դպրոցից, հոգեբանորեն ճնշված լինելու պատճառով այլևս չեն ցանկանում շարունակել իրենց կրթությունը: Այսպիսի հետևանքը, միանշանակորեն, ի թիվս այլոց, ազդելու է անձի՝ աշխատաշուկայում ունեցած դիրքի և հնարավորությունների վրա՝ հանգեցնելով սոցիալ-տնտեսական խնդիրների:

Ինչպես նշվեց, արձանագրվել են նաև կրթության իրավունքի խախտումներ ռազմաուսումնական հաստատություններում, որոնք զուգորդված են մասնավոր կյանքին վերաբերող տվյալների տարածմամբ և նվաստացուցիչ վերաբերմունքով: Տրամաբանական է, որ ռազմաուսումնական հաստատությունից զինծառայողներին կրճատելը վնասում է նաև պետական շահին, հետևաբար, այսպիսի վերաբերմունքը ուղղակիորեն վնասում է ոչ միայն տուժողին, այլ նաև պետությանը:

Հաշվի առնելով այն փաստը, որ կրթական հաստատությունները պետական են, արարքը հանդիսանում է պետության նեգատիվ պարտավորության՝ մարդու իրավունքների խախտումներից ձեռնպահ մնալու պարտավորության խախտում:

ՄԱՍՆԱՎՈՐ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԳԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ

1. Յուրաքանչյուր ոք ունի իր մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունք:

2. Մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 31

Յուրաքանչյուր անձ ունի մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունք:[21] Անձնական և ընտանեկան կյանքի իրավունքը սահմանում է յուրաքանչյուր անձի՝ օրենքի առջև իրավասուբյեկտության ճանաչման, ինչպես նաև գաղտնիության իրավունքը:[22] «Անձնական կյանքը» լայն հասկացություն է. ներառում է անձի ֆիզիկական և հոգեբանական ամբողջությունը: Որոշ դեպքերում այն ընդգրկում է նաև անձի ֆիզիկական և սոցիալական ինքնության ասպեկտները: Այնպիսի հանգամանքները, ինչպիսին են, օրինակ, անձի գենդերային նույնականացումը, անունը, սեռական կողմնորոշումը և սեռական կյանքը, տեղավորվում են մարդու անձնական և ընտանեկան կյանքի իրավունքի պաշտպանության համատեքստում:[23]

Ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքը անձի հիմնարար, անքակտելի իրավունքներից մեկն է և մարդու արժանապատվության անբաժան մասը, որի պատշաճ պաշտպանությունը պետության ժողովրդավարության անհրաժեշտ նախապայմանն է: Այն պաշտպանվում է նաև խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի անթույլատրելիության ներքո:

Խոշտանգումը բնութագրվում է որպես ցանկացած գործողություն, որի միջոցով պետական պաշտոնատար անձը կամ պաշտոնապես հանդես եկող այլ մարդ, կամ նրանց հրահրմամբ և գիտությամբ կամ լռելյայն համաձայնությամբ, որևէ անձի մտածված կերպով հասցվում է ուժեղ ցավ կամ տառապանք՝ մարմնական կամ մտավոր, նրանից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություն կորզելու, իր կամ երրորդ անձի կատարած հանցանքի կամ այն գործած լինելու մեջ կասկածելու համար, ինչպես նաև նրան կամ երրորդ անձին վախեցնելու կամ հարկադրելու նպատակով, կամ ցանկացած բնույթի խտրականության վրա հիմնված ամեն մի այլ պատճառով:[24]

Վերջինս պաշտպանելու միջազգային պարտավորության ներքո պետությունը պետք է նախ զերծ մնա անձանց խոշտանգելուց: Պետական այրերը, իրավապահ

21 Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, 2015 թ. փոփոխություններով, հոդված 31
22 Տե՛ս International Covenant on Civil and Political Rights, 1966, Article 16
23 Տե՛ս Pretty v. The United Kingdom, No. 2346/02, §49
24 Տե՛ս Convention against Torture and Other Cruel, Inhuman or Degrading Treatment or Punishment, 1984, Article 1

մարմինների ծառայողները, պետական լիազորությամբ օժտված անձինք չպետք է ֆիզիկական կամ մտավոր բռնության ենթարկեն մասնավոր անհատներին՝ նրանց խտրականությունից պաշտպանվող որևէ հատկանիշի հիման վրա: Անհրաժեշտ է նաև ամրագրել, որ խոշտանգումներից և դաժան վերաբերմունքից ազատ լինելը անձի բացարձակ իրավունք է և ենթակա չէ սահմանափակման:[25]

Փորձելով տարբերակել խոշտանգումը անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից՝ պետք է նշել, որ խոշտանգումը անձին դիտավորությամբ պատճառված այն վնասն է, որը պատճառել է շատ լուրջ և դաժան տառապանք, մինչդեռ նվաստացնող վերաբերմունք կարող է համարվել այն վերաբերմունքը, որն անձի մոտ առաջացնում է վախի, վտանգի, ստորացված լինելու զգացողություններ,[26] իջեցնում է անձի հեղինակությունը և դերը, մարդկային արժանապատվությունը կամ ստիպում է անձին գործել իր կամքին կամ խղճին հակառակ:[27] Որոշ դեպքերում ՍԿԳԻ հիմքով խտրականությունը, սպառնալիքները նույնպես նվաստացնող վերաբերմունք են համարվում:[28]

Այնուամենայնիվ, խոշտանգումների, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի արգելքը միայն պետական ծառայողների վրա չի տարածվում: Պետությունը քննարկվող իրավունքի պաշտպանության միջազգային պարտավորությունների ներքո պետք է կանխարգելի այլ անձանց կողմից մյուսների ֆիզիկական ապահովության խախտումը,[29] թույլ չտա ֆիզիկական ոտնձգությունների իրականացումը՝ ծեծը, առողջությանը վնաս պատճառելը, հարվածելը, դանակահարելը, այլ ներգործությունը անձի մարմնի նկատմամբ: Միևնույն ժամանակ պետությունը պետք է մեխանիզմներ ստեղծի ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքի խախտումը վերացնելու համար: Այդպիսի մեխանիզմներից կարող են լինել համապատասխան գործողությունների քրեականացումը, տուժողին պատճառված վնասի դիմաց տրվող փոխհատուցումը:[30]

Անձի ֆիզիկական և հոգեբանական անձեռնմխելիությունը պաշտպանվում է նաև մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունքի ներքո:[31] Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք որոշումներում դիրքորոշում է հայտնել, որ մասնավոր անհատների ոտնձգություններից անձի ֆիզիկական և հոգեբանական անձեռնմխելիության իրավունքի պաշտպանության կապակցությամբ իշխանություններն ունեն պոզիտիվ պարտականություն՝ որոշ դեպքերում ՄԻԵԿ-ի 2-րդ կամ 3-րդ հոդվածների, մյուս դեպքերում՝ 8-րդ հոդվածի (առանձին կամ 3-րդ հոդվածի համակցությամբ) ներքո՝ ստեղծել և ապահովել իրավական նորմերի պատշաճ շրջանակ, որը թույլ կտա պաշտպանել մասնավոր անձանց կողմից բռնի գործողություններից:[32]

ՀՀ-ում անձին դիտավորությամբ ֆիզիկական վնաս պատճառելու դեպքում պատասխանատվության մեխանիզմները նախատեսվում են ՀՀ քրեական

25 Տե՛ս Pretty v. The United Kingdom, No. 2346/02, §4
26 Տե՛ս Aydin v. Turkey, No23178/94
27 Տե՛ս East African Asians v United Kingdom, No 4715/70, 4783/71, 4827/71
28 Տե՛ս Smith and Grady v United Kingdom, No 33985/96, 33986/96
29 Տե՛ս CAT, General Comment No. 3. A v United Kingdom, No. 25599/94, Rep. 1996-VI, Judgement of 23 September 1998
30 Տե՛ս Blanco Abad v Spain, CAT Communication No. 59/1996, 14 May 1998, Members of the Gldani Congregation of Jehovah's Witnesses v Georgia, op. cit., §97. CAT, General Comment No. 2.; Torture in International Law, a guide to jurisprudence, Association for the Prevention of Torture, page 72
31 Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, 2015 թ. փոփոխություններով, հոդված 31; European Convention on Human Rights, Article 8
32 Տե՛ս Osman v. the United Kingdom, §§ 128-130; Bevacqua and S. v. Bulgaria, § 65; Sandra Janković v. Croatia, § 45; A v. Croatia, § 60; Đorđević v. Croatia, §§ 141-143; Söderman v. Sweden [GC], § 80

օրենսգրքով:[33] Վերջինս պատիժ է սահմանում տարբեր աստիճանի վտանգավորության և տարբեր տեսակի վնասներ պատճառող ֆիզիկական ներգործության հանցանքների համար:

Սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով ֆիզիկական բռնություն

Մոտ 22 տարեկան անծանոթ երիտասարդը, դրսում տեսնելով իրար ձեռք բռնած զբոսնող զուգընկերուհիներին, քաշքշել է, բռունցքով հարվածներ է հասցրել նրանցից մեկի գլխին, պայուսակով հարվածել և սեռական բնույթի հայհոյանքներ հնչեցրել: Նա նաև ասել է. «Ես բանակ չեմ գնում, ծառայում, որ քո նմանները հանգիստ քայլեն երկրում»: Տուժողը հանրության համար տարբերվող արտաքին է ունեցել՝ թևերին՝ դաջվածքներ, մազերի մի մասը՝ սափրած:

Դիմողը չի ցանկացել դիմել ոստիկանություն՝ վախենալով, որ կբացահայտվի իր և զուգընկերոջ սեռական կողմնորոշումը, իսկ ինքը դա չի կարող թույլ տալ, քանի որ ապրում է ընտանիքի հետ և ունի երեխաներ:

Անձի գործընկերը կենցաղային վեճից հետո մեկ անգամ բռունցքով հարվածել է դիմողի դեմքի շրջանում: Հետագայում հարվածողը դիմողին և նրա մյուս գործընկերներին խոստովանել է, որ դիմողը նույնասեռական է, «նույնասեռականի շարժումներ» է կատարում, ինչը իրեն բարկացնում է և նյարդայնացնում:

Տուժողը դիմել է իրավապահներին, սակայն քրեական գործի հարուցումը մերժվել է:

Մարզային քաղաքներից մեկի շենքի բակում հավաքված 9-15 տարեկան մի խումբ տղաներ սեռական բնույթի հայհոյանքներ, սեռական կողմնորոշմանը վերաբերող վիրավորանքներ են հնչեցնել նույնասեռական անձի և նրա ընտանիքի հասցեին: Խմբից 2 տղա՝ մոտ 15 տարեկան, դիմողին առաջարկել են գնալ մոտակայքում գտնվող մանկապարտեզի շենքի ետևի հատված՝ հարցերը պարզաբանելու համար: Այդտեղ նույնպես 2 տղաները սեռական բնույթի հայհոյանքներ են հնչեցրել, նրանց միացել են ևս 3 տղաներ: Տղաներից մեկը մոտեցել է, որ հարվածի տուժողին, վերջինս հանել է իր մոտ գտնվող արցունքաբեր գազը և փչել 2 տղաների աչքերին, այնուհետև վազելով հասել է մինչև մանկապարտեզի մուտքի մոտ: Փախչելու ընթացքում նրա ետևից քարեր են նետել: Մանկապարտեզի մուտքի մոտ դիմողին նորից մոտեցել է այդ տղաներից մեկը, քարերով հարվածել ոտքերին, այնուհետև մեծ փայտով մոտ չորս անգամ նորից հարվածել է ոտքերին: Նա անընդհատ ասել է, թե արի գնանք, առանձին պարզենք հարցերը, բայց դիմողը, մտավախություն ունենալով, որ իր նկատմամբ կարող են բռնություն գործադրել, մնացել է մանկապարտեզի մուտքի մոտ, ինչի պատճառով տղան քաշքշել է դիմողին: Տղաներից մյուսն էլ դիմողին ասել է, որ նա գնա այդտեղից, քանի որ նրա ետևից գալիս են տղաների եղբայրները, ում աչքերին

33 Տե՛ս ՀՀ քրեական օրենսգիրք, գլուխ 16. https://www.arlis.am/documentview.aspx?docid=149259

նա գազ էր փչել: Որոշ ժամանակ անց դիմողը նկատել է, որ իր ուղղությամբ գալիս են մոտ 7-8տղաներ, որոնց մի մասը մոտ 12-15 տարեկան, որոշները՝ 17-18 տարեկան էին: Դիմողը նրանց ձեռքերին նկատել է քարեր, դանակներ և փայտեր: Դիմողը մտել է մանկապարտեզի շենք: Վիճաբանության ընթացքում՝ դեռևս շուրջ ժամը 16:20-ին դիմողը ահազանգել է ոստիկանություն և հայտնել վտանգի մասին, խնդրել մոտենալ: 17:30-ի շրջանում ոստիկանությունը դեռևս մոտեցած չի եղել: Դիմողը մանկապարտեզի աշխատակիցների ուղեկցությամբ նստել է տաքսի և գնացել ոստիկանության իրենց քաղաքի բաժանմունք: Այնտեղ փորձել է պարզել, թե ինչու այդպես էլ չեն մոտեցել ահազանգի հիման վրա: Ոստիկանությունում հայտնել են, որ ինքը Երևանի բաժին է զանգահարել, սխալ է զանգահարել, պետք է զանգահարեր իրենց քաղաքի բաժին: Հարկ է նշել, որ տուժողը զանգահարել է 1-02, ինչը ոստիկանության թեժ գծի հեռախոսահամարն է՝ անկախ տարածքից:

Գենդերային ինքնության և արտահայտման հիմքով բռնություն

Տրանս կինը գիշերը շուրջ ժամը 2-ին Յանդեքս տաքսի է պատվիրել: Երբ վարորդը մոտեցել է և տեսել է, որ պատվիրատուն տրանս կին է, հրաժարվել է պատվերը կատարել: Կինը պահանջել է, որ պատվերը կատարվի, այդ ժամանակ վարորդը բարկացած մոտեցել է կնոջը՝ ընթացքում հայհոյանքներ հնչեցնելով: Կինը, նախկինում բազմիցս բռնության ենթարկված լինելով, վախեցել է, որ վարորդը ցանկանում է բռնություն գործադրել, հանել է իր մոտ եղած դանակը՝ ինքնապաշտպանության նպատակով: Վարորդը քաշքշել է կնոջը, խլել դանակը, սայրով բազմաթիվ հարվածներ հասցրել ձեռքերին: Բացի այդ, մի քանի անգամ ապտակել է կնոջը: Այնուհետև 2 անգամ գլխով հարվածել է կնոջ գլխին, ինչի պատճառով կինը հավասարակշռությունը կորցրել է և ընկել է գետնին: Դրանից հետո վարորդը շարունակել է ոտքերով հարվածներ հասցնել կնոջը:

Ներկայացվել է հաղորդում հանցագործության մասին: Նախաձեռնվել է քրեական վարույթ ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ հոդվածի 1-ին մասով (ֆիզիկական ներգործություն): Կինը ճանաչվել է տուժող:

Տրանս կինը գիշերը՝ շուրջ ժամը 3-ին, դուրս է եկել զբոսնելու: Զբոսնելիս անձը նկատել է երկու տղամարդու, որոնք նստած էին մոտակա նստարանին և նայում էին իրեն: Նա նաև լսել է, որ իր հասցեին հայհոյանքներ են հնչեցնում, սակայն չի արձագանքել դրանց: Երբ դիմողն անցել է նրանց կողքով, նրանք մոտեցել են դիմողին և նրանից ժամը հարցրել: Դիմողը պատասխանել է, ինչից նրանք նկատել են, որ նա տրանս կին է, և սկսել են բարձրաձայն բղավել և հայհոյել կնոջը: Կինն ասել է, որ մի կողմ քաշվեն իր ճանապարհից, քանի որ իրենք ծանոթ չեն՝ փորձելով չվիճաբանել նրանց հետ: Տղամարդկանցից մեկը ուժեղ հրել է կնոջը՝ ընտանիքի հասցեին ստորացուցիչ հայհոյանքներ հնչեցնելով: Դիմողը սկսել է բղավել և օգնություն կանչել, որից հետո 2 տղամարդիկ հարձակվել են նրա վրա: Նրանցից մեկը փորձել է փակել դիմողի բերանը, 3 անգամ ուժեղ հարվածել է դիմողի բերանին և այտին՝ փշրելով նրա ատամները: Մյուս տղամարդը ոտքերով անկանոն հարվածներ է հասցրել դիմողի որովայնին, մեջքին և ոտքերին:

Այնուհետև տղամարդիկ փախուստի են դիմել:

Դիմողը չի ցանկացել դիմել իրավապահ մարմիններին, իր խոսքերով՝ դա բացարձակապես անիմաստ էր: Նախկինում իր և իր ընտանիքի անդամների հետ պատահել են նման դեպքեր, և երբ դիմել է ոստիկանություն, իրեն են մեղադրել:

Սեռական ծառայություններ մատուցող տրանս կինն իր բնակարանում հանդիպել է հաճախորդի հետ: Սեռական ակտից հետո հաճախորդը պահանջել է իրեն վերադարձնել գումարը, սակայն կինը հրաժարվել է: Դրանից հետո հաճախորդը սկսել է սպառնալիքներ հնչեցնել նրա հասցեին, բղավել է դիմողի վրա և հայհոյել նրան, ինչից հետո հանել է իր մոտ գտնվող դանակը և այն դրել դիմողի վզին՝ պահանջելով վերադարձնել գումարը: Կինը, վախենալով իր կյանքի և առողջության համար, ստիպված է եղել վերադարձնել գումարը բռնարարին: Կնոջ խոսքերով՝ բռնարարը բղավել և աղմկել է շենքում՝ տեղյակ լինելով իր գենդերային ինքնության մասին և փորձելով իր համար խնդիրներ առաջացնել շենքում, որպեսզի նրան վտարեն բնակարանից:

Երկու տրանս կանայք գտնվել են սեռական ծառայություններ մատուցող տրանս կանանց հավաքատեղի համարվող տարածքում: Նրանց են մոտեցել 23-28 տարեկան երեք երիտասարդ տղաներ՝ ալկոհոլի ազդեցության տակ: Տղաները տրանս կանանց հասցեին հնչեցրել են սեռական բնույթի հայհոյանքներ, վիրավորանքներ՝ նրանց գենդերային ինքնության և աշխատանքի հետ կապված: Տղաները սկսել են նրանց քաշքշել, պոկել են նրանցից մեկի արհեստականորեն երկարացված մազերը, քաշել են մատը, որը վնասվել է: Կինը թողել է բարձրակրունկները և վազելով անցել փողոցը: Այդ ընթացքում մեքենաներից մեկը փորձել է նրան վրաերթի ենթարկել՝ վարելով նրա ետևից: Տղաները ապտակել են նաև մյուս տրանս կնոջը, որը բարձրակրունկներով է եղել և վայր է ընկել: Այնուհետև սկսել են ոտքերով հարվածել վերջինիս, նրա վրա ծխախոտ են նետել և թքել են: Դիմողները փորձել են կանգնեցնել ոստիկանության՝ այդ տեղով ընթացող մեքենան, որը չի կանգնել, ինչից հետո բռնարարները ասել են՝ «տեսե՛ք, անգամ ոստիկանությունը ձեզ չի օգնում»:

Կանայք ոստիկանություն են զանգահարել, ոստիկանությունը ժամանել է մոտ 1 ժամ հետո: Նրանց և բռնարարներին ոստիկանության բաժին են տարել: Այդ բաժնում ևս բռնարարները սեռական բնույթի հայհոյանքներ են հնչեցրել կանանց նկատմամբ, ասել են՝ «թողե՛ք, սրանց պիտի մորթենք, սրանց պիտի վերացնենք»: Ոստիկանները քայլեր չեն ձեռնարկել հնչող բռնության կոչերը կանխելու ուղղությամբ, միայն ասել են՝ «եկեք, սրանք շառ են»՝ նկատի ունենալով տրանս կանանց:

Տրանս կինը քաղաքում քայլելիս է եղել, երբ նրան են մոտեցել երկու երիտասարդ, և միասին քայլել են: Երիտասարդները կնոջը գարեջուր են հյուրասիրել, այնուհետև նրանցից մեկը առաջարկել է սեռական հարաբերություն ունենալ: Կինը հրաժարվել է, ինչից հետո տղան պայուսակից հանել է դանակը, փորձել է հարվածել կնոջը, սակայն կինը խուսափել է հարվածից: Տղայի ընկերը նրա ձեռքից վերցրել է դանակը և դրել նրա պայուսակի մեջ: Որոշ ժամանակ անց տղան նորից հանել է դանակը, ստիպել, որ կինը իր հետ սեռական հարա-

բերություն ունենա օրալ եղանակով՝ այդ ընթացքում դանակը նրա գլխավերևում պահելով: Դրանից հետո մոտեցել է տղայի ընկերը, ով նույնպես օրալ եղանակով հարաբերություն է ունեցել տրանս կնոջ հետ: Այդ ընթացքում առաջին տղան շարունակել է դանակը պահել տրանս կնոջ տեսադաշտում: Հարաբերությունից հետո տղան դանակը դրել է պայուսակի մեջ, սակայն հետո նորից սկսել է սեռական բնույթի հայհոյանքներ և վիրավորանքներ հնչեցնել, դանակը հանել և վազել է կնոջ ետևից: Կինը կարողացել է փախչել այդտեղից և ահազանգել է ոստիկանություն:

Ներկայացվել է հաղորդում հանցագործության մասին: Հարուցվել է քրեական գործ սառը զենք պահելու և սեքսուալ բնույթի բռնի գործողությունների համար: Դիմողը ճանաչվել է տուժող:

Համացանցում հայտնվել է տեսանյութ, որտեղ մոտ 35 տարեկան տղամարդն իր հեռախոսով միացրած ուղիղ եթերով վիրավորական արտահայտություններ և հայհոյանքներ է հնչեցնում տրանս անձանց նկատմամբ, ցույց է տալիս, որ իր ձեռքին խոշոր մատանիներ կան: Մոտենում է տրանս սեքս աշխատողների հավաքատեղիում գտնվող տրանս կանանցից մեկին, հարց տալիս նրան, այնուհետև բռունցքով հարվածում է կնոջը: Կինը վայր է ընկնում: Տղամարդը շարունակում է ձեռքերով և ոտքերով հարվածներ հասցնել կնոջը՝ այդ ընթացքում հայհոյելով և շարունակելով տեսանկարահանել: Մեկ-երկու րոպե անց կինը կարողանում է վեր կենալ և փախչել, իսկ տղամարդը շարունակում է հայհոյել:

Ժամեր անց «Յութուբ» սոցիալական ցանցում “Karen Arayan անունով օգտատերը հրապարակել է այդ տեսանյութը՝ «ՍԱՏԿԱՑՐԵՑ ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐԻՆ ԵՐԵՎԱՆԻ ՓՈՂՈՑՈՒՄ / ԿԵՑՑԵՍ ՎԱՀԵ» վերնագրով: Տեսանյութից պարզ է դառնում, որ “Karen Arayan”-ը հանդիսանում է «Լույսի բանակ» ՌԲՀԿ նախագահը: Տեսանյութի ամբողջ ընթացքում “Karen Arayan”-ը հրապարակայնորեն արդարացնում է բռնությունը և հայտնում, որ Վահե Եղիազարյանին՝ տեսանյութի բռնարարին, «Լույսի բանակ» ՌԲՀԿ-ի կողմից տրվել է շնորհակալագիր, քանի որ տրանս անձին ծեծի ենթարկելով նա, իբրև թե կատարել է հայրենանվեր գործունեություն: Անձի գործողությունները հանրության շրջանում լայն արձագանք են գտնում, նրան գովաբանում են և արդարացնում:

Հարուցվել է քրեական գործ:

Քայլելով դեպի կրպակ՝ տրանս կինը հանդիպել է երեք տղաների՝ մոտ 30 տարեկան, որոնք փորձել են ծանոթանալ կնոջ հետ, սակայն նա չի ցանկացել: Հաջորդ անգամ տղաներն արդեն կնոջ շենքի մուտքի մոտ հայհոյախառն բառապաշարով հարցրել են՝ արդյոք նա օրալ սեռական հարաբերությամբ զբաղվու՞մ է: Դիմողը նշել է, որ դա իրենց չի վերաբերում, որից հետո տղաները հայհոյել են և սկսել են ոտքերով ու ձեռքերով հարվածել կնոջը: Կինը վայր է ընկել,

իսկ տղաները շարունակել են հարվածել և հայհոյել նրան: Տղաները վախեցել և փախել են, երբ փողոցում երևացել է պարեկային ոստիկանության ավտոմեքենա:

Տրանս կինը սեռական ծառայություններ մատուցող տրանս անձանց հավաքատեղի համարվող տարածքում՝ կանգնած է եղել կանացի հագուստով մի քանի տրանս անձանց հետ: Նրանց կողքից ինքնագլորով անցնելիս են եղել երկու երիտասարդ, որոնցից մեկը թքել է դիմողի վրա և սեռական բնույթի հայհոյանքներ հնչեցրել՝ ասելով. «կարելի է սրանց գլուխը կտրել»:

Ֆիզիկական բռնությունն առավել տարածված հանցագործության տեսակներից է, որին բախվում են ԼԳԲՏ անձինք: Այդպիսի դեպքերը տեղի են ունենում հիմնականում անծանոթների կողմից, որոնք տուժողների սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության մասին ենթադրում են նրանց արտաքին տեսքից կամ գտնվելու վայրից: Մասնավորապես, տրանս անձինք առավելապես բռնության են ենթարկվում որպես սեռական ծառայություններ տրամադրող տրանս անձանց հավաքատեղի հայտնի վայրերում կամ նրանց արտաքինից հնարավոր է լինում հասկանալ, որնրանք տրանսգենդեր անձինք են: Այն հանգամանքը, որ նույն տարածքում տրանսգենդեր անձանց նկատմամբ ֆիզիկական բռնությունների մասին բարձրաձայնվում է և ոստիկանությանը հաղորդումներ են ներկայացվում տարիներ շարունակ, խոսում է պետության կողմից անգործության մասին: Այսինքն, իրավապահ մարմիններն այդպես էլ չեն հաջողում ապահովել մարդկանց անվտանգությունը մի այնպիսի վայրում, որտեղ բռնությունների դեպքերը հայտնի են, և, մյուս կողմից, ձախողում են համակողմանի և լրիվ քննության իրականացումը, ինչը հանգեցնում է անպատժելիության մթնոլորտի: Այս մթնոլորտը հասել է մի այնպիսի աստիճանի, որ անձին հնարավոր է ֆիզիկական բռնության ենթարկել ուղիղ եթերում՝ առանց թաքցնելու ինքնությունը, այնուհետև ակտիվորեն տարածել տեսանյութը, խրախուսել այդ և հետագա բռնությունը տրանսգենդեր անձանց նկատմամբ և մնալ անպատիժ: Եվ երբ իրավապահ մարմինների այս հանցավոր անգործությունը շարունակական է, կարելի է եզրակացնել, որ պետական որոշումներ կայացնող մարմինը չունի քաղաքականություն՝ պայքարելու ատելության շարժառիթով կատարվող հանցագործությունների դեմ:

Այն, որ բռնություններից տուժած անձինք խուսափում են դիմել իրավապահ մարմիններին, բազմիցս փաստվել է հենց տուժողների կողմից, ովքեր կամ չունեն վստահություն, որ գործը քննության կառնվի և բռնարարը պատասխանատվության կենթարկվի, կամ խուսափում են ոստիկանության կողմից կրկնազոհացվելուց, նվաստացուցիչ, ծաղրական վերաբերմունքի ենթարկվելուց: Այս մտահոգությունները կապված են նաև ստորև ներկայացված իրավախախտումների հետ, որոնք դրսևորվել են հենց ուղղակիորեն իրավակիրառ մարմինների կողմից ատելության հիմքով կատարված հանցագործություններից տուժած ԼԳԲՏ անձանց նկատմամբ:

Լիազորությունների չարաշահում իրավապահ մարմինների կողմից

Նույնասեռական զույգը մեքենայի մեջ ֆիլմ է դիտել, երբ նրանց են մոտեցել պարեկային ծառայության 2 աշխատակից: Աշխատակիցները նրանցից պահանջել են ցույց տալ իրենց պայուսակի պարունակությունը, խուզարկել են մեքենայի սրահը և այլ հատվածներ: Պարեկային ծառայողները, հասկանալով, որ անձինք նույնասեռական են, սկսել են քամահրանքով վերաբերվել նրանց՝ ասելով՝ «ձեզանից ո՞վ է աղջիկ», «քո ընկերուհին ...», «չե՞ս ուզում սեռափոխվես», «համ աղջիկների հետ ես, համ տղաների՞»: Պարեկները նշել են, որ դիմողները հակաօրինական արարք են անում՝ հանրային վայրում սեռական գործողություններով են զբաղվում, ինչի համար նրանց պետք է տուգանեն: Պարեկները նշել են, որ դիմողները պետք է իրենց վճարեն, քանի որ իրենք կանխել են հանցագործությունը: Նրանք յուրաքանչյուրից պահանջել են 20000 դրամ: Դիմողը կարողացել է համոզել պարեկներին, որ իրենք հակաօրինական արարք չէին անում և չվճարել պարեկների պահանջած գումարը:

Տուժողը չի ցանկացել դիմել իրավապահ մարմիններին, քանի որ կարծում է, որ դրա արդյունքում կբացահայտվի իր սեռական կողմնորոշումը:

Ընտանեկան բռնությունից տուժած անձից հանցագործության մասին հաղորդում ընդունելիս հետաքննիչը, տեղեկանալով, որ նա բռնության է ենթարկվել իր սեռական կողմնորոշման համար, ասել է, որ բոլոր նորմալ ծնողներն էլ նույն կերպ կվարվեին, եթե տեղեկանային, որ իրենց երեխան ունի այլ սեռական կողմնորոշում: Հետաքննիչը, չթաքցնելով իր խտրական վերաբերմունքը, տուժողին հարցրել է, թե ով է իրեն ներքաշել այդ շրջապատ՝ նկատի ունենալով ԼԳԲՏ անձանց:

Բացատրություն վերցնելիս հետաքննիչը տուժածին և նրա մորը կանչել է միաժամանակ: Մայրը հոգեբանական ճնշում է գործադրել տուժողի վրա. նա իր հետ բերել էր տուժողի 3-ամյա եղբորը, ում ասել է. «նայի, որ էլ էս կեղտին չես տեսնելու», և անընդհատ ստիպել է, որ երեխան քրոջը վատ բաներ ասի:

Ոստիկանության աշխատողները բռնության զոհ դարձած տրանս անձանց ծաղրել են, ծիծաղել նրանց վրա, ասել՝ նրանք «շառ» են:

Քննչական բաժնում քննիչը վիճաբանել է տուժողի հետ այն բանից հետո, երբ տուժողը նշել է, որ ոստիկանները խտրական են և քմծիծաղ է տվել: Քննիչը տուժողից պահանջել է իրեն «նորմալ» պահել, պատասխանել միայն իր հարցերին, այլ արձագանքներ չտալ: Նա նշել է, որ իր սենյակում չի հանդուրժելու նման պահվածք, և ինքն է որոշում՝ ինչն է թույլատրելի, ինչը՝ ոչ: Տուժողի ներկայացուցիչը պահանջել է հարգալից խոսել տուժողի հետ՝ հիշեցնելով միջազգային նորմատիվները և հաշվի առնելով, որ հանցագործությունից տուժած անձը կարող է ծանր հոգեհուզական վիճակում գտնվել, ծիծաղել, լաց լինել կամ այլ ոչ սովորական ձևով արտահայտել իր զգացումները: Վարույթն

իրականացնող մարմինը պետք է համբերատար և զգայուն լինի: Դրանից հետո քննիչը հրաժարվել է համակարգչի միջոցով արձանագրել տուժողի ցուցմունքը, ասելով՝ եթե ուզում եք, դուք գրեք: Ավելի քան 1 ժամ տևած պարզաբանումների, ՄԻՊ-ին ահազանգելու արդյունքում քննիչը տուժողի ցուցմունքն արձանագրել է համակարգչի միջոցով:

Բռնությունից տուժած նույնասեռական անձի հասցեին ոստիկանության աշխատակիցները վիրավորական արտահայտություններ են հնչեցրել, դիմողին հարցրել են, թե ինչու հայհոյանքներ չի օգտագործում, ինչ շորեր է հագել, ականջները ծակ են, մնում է շրթներկը և այլն: Մեկնաբանություններ են արել նաև նրա սեռական կողմնորոշման մասով՝ ասելով, թե նա տղայի հետ է ամուսնանալու:

Դիմողը գտնվել է իր զուգընկերուհու տանը, երբ նկատել է, որ իր բջջային հեռախոսը գողացել են: Նրանք միասին դիմել են տվյալ մարզի ոստիկանություն: Ոստիկանության բաժանմունքում վերցրել են նրա մյուս բջջային հեռախոսը՝ գողացվածը գտնելու համար: Այդ ընթացքում դիմողից թաքուն դիտել են նրա և զուգընկերուհու անձնական տեսանյութերը, նկարները: Դրանից հետո ոստիկանության աշխատակիցները առանձին զրուցել են դիմողի զուգընկերուհու հետ, սպառնացել են, որ կհայտնեն ընտանիքին նրա սեռական կողմնորոշման մասին, ցույց կտան այդ նկարները, և ստիպել են խոստովանել, որ ինքն է գողացել հեռախոսը: Ոստիկանները դիմողի հետ զրուցել են նաև առանձին, ասել, որ «իրենց նմանները» գալիս և պղծում են մարզը, կոնֆլիկտներ են ստեղծում, ստիպել են խոստովանել, որ հեռախոսը չի կորել, ինքն այդ ամենը սուտ է ասել: Ոստիկանները դիմողին նաև ասել են, որ իր զուգընկերուհու ընտանիքից հեռու մնա, զուգընկերուհին «փչացած է», իսկ զուգընկերուհու ընտանիքի մոտ բացասաբար են արտահայտվել դիմողի մասին:

Ներկայացված օրինակներում իրավակիրառ մարմինների գործողությունները արտացոլում են այն իրավիճակը, որից խուսափելու համար իրավախախտման զոհ դարձած ԼԳԲՏ անձինք խուսափում են կիրառել իրավական պաշտպանության միջոցները: Այսինքն, տուժողները մեկ անգամ իրավապահ մարմինների հետ առնչվելուց հետո ցանկություն չունեն կրկին դիմելու նրանց: Հարկ է նկատի ունենալ, որ ատելության շարժառիթով կատարված հանցագործության զոհ դարձած անձը գտնվում է խոցելի հոգեվիճակում, հոգեկան ճնշվածության և վախի մեջ, որի պարագայում նրանց անհրաժեշտ է ոչ միայն իրավական, այլ նաև հոգեբանական աջակցություն, որպեսզի նա կարողանա հաղթահարել իր ինքնության պատճառով իրեն հասցված վնասը: Տուժողները հաճախ այսպիսի հանցագործության զոհ դառնալուց հետո անգամ չեն ցանկանում խոսել այդ մասին և գործը քննող մարմիններին չեն հայտնում այնպիսի տվյալներ, որոնք էական նշանակություն ունեն գործի լրիվ և բազմակողմանի քննության համար: Իսկ երբ նման հոգեվիճակում գտնվող անձը ոչ միայն չի ստանում հոգեբանական աջակցություն, այլ հակառակը՝ արժանանում է լրացուցիչ ծաղրի, նվաստացման և այլ իրավախախտումների, նա էլ ավելի վատ դրության մեջ կարող է հայտնվել, հատկապես հոգեկան ամբողջականության առումով:

Բացի այդ, արձանագրված դեպքերում իրավակիրառ մարմինների գործողությունները ևս հանդիսանում են պատասխանատվություն առաջացնող իրավախախտում, սակայն գործնականում որևէ մեկը մինչ օրս նման արարքի համար պատասխանատվության չի ենթարկվել:

Այստեղ մենք գործ ունենք մարդու իրավունքները հարգելու պարտավորության խախտման հետ, երբ իրավախախտը հենց պետական մարմինն է: Այս պարագայում էլ ավելի դժվար է ակնկալել, որ անձի խախտված իրավունքները կվերականգնվեն, քանի որ նա գործ ունի այն պետական ինստիտուտի հետ, որը կոչված էր իրեն պաշտպանելու, այլ ոչ թե ոտնահարելու իր իրավունքները:

Տրանսգենդեր անձինք բախվում են մի շարք դժվարությունների կամ սահմանափակումների իրենց գենդերային ինքնության պատճառով: Հարկ է նշել, որ տրանսգենդեր անձանց խնդիրները հասցեավորելու համար պետությունը պետք է հստակ քաղաքականություն որդեգրի: Դա պետք է ներառի գենդերի վերահաստատման գործընթացի իրավական կարգավորումը, ներառյալ՝ հորմոնաթերապիա, սեռափոխության վիրահատություններ, հոգեբանի աջակցություն, նախավիրահատական զննություն և հետվիրահատական հսկողություն: Մեկ այլ խնդիր է այն, որ Հայաստանի Հանրապետությունում անձը նույնականացնող փաստաթղթերի վրա սեռի վերաբերյալ նշումը փոփոխում է միայն սեռափոխության վիրահատություններ անցած լինելու վերաբերյալ բժշկական տեղեկանքի հիման վրա: Այսինքն անձը, ում գենդերային ինքնությունը չի համապատասխանում կենսաբանական սեռին, սակայն չի ցանկանում կամ չունի հնարավորություն անցնելու սեռափոխության վիրահատություն, կարող է մի շարք խնդիրների բախվել, մասնավորապես այն պատճառով, որ իր արտաքին տեսքը չի համապատասխանում անձնագրում նշված սեռին: Այս խնդիրը կարող է անձի համար դժվարություններ ստեղծել ցանկացած հասարակական հարաբերությունում: Ստորև ներկայացված է բազմաթիվ օրինակներից մեկը՝ արձանագրված 2022 թ.-ի ընթացքում:

Տրանս անձը նոր անձնագիր ստանալու համար ստիպված է եղել գնալ տարածքային զինկոմիսարիատ՝ զինվորական ծառայություն անցած լինելու վերաբերյալ տեղեկանք ձեռք բերելու համար: Զինկոմիսարիատում անձին ծաղրել են: Ծառայողները հրաժարվել են դիմողին ծառայության վերաբերյալ տեղեկանք տրամադրել այն պատճառաբանությամբ, որ նրա արտաքինը կնոջ արտաքին է և չեն կարող նույնականացնել անձին՝ չնայած նրան, որ անձը ցույց է տվել իր նախկին անձնագրի լուսանկարը:

Այստեղ գործ ունենք ոչ միայն պարզապես տեխնիկական խնդրի հետ, այլ նաև հստակ ծաղրական վերաբերմունքի՝ դրսևորված պետական մարմնի կողմից: Այսինքն, բացի այն, որ անձը իրեն անհրաժեշտ փաստաթուղթը ստանալու խնդրի է բախվել, նա նաև իր ինքնության պատճառով թիրախավորվել է պետական մարմնի կողմից, ինչի արդյունքում խախտվել է մասնավոր և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքը: Անձին մի կողմից հոգեբանական վնաս է պատճառվել, մյուս կողմից նա զրկվել է իր իրավունքներն իրացնելու մինիմալ հնարավորությունից՝ անձնագիր չունենալու պատճառով: Ինչպես ներկայացված

է սույն զեկույցի՝ պետության պարտավորություններին վերաբերող բաժնում՝ այս առնչությամբ ևս ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով կոմիտեն առաջարկ է ներկայացրել պետությանը, այն է՝ **ապահովել տրանսգենդեր ածանց, ներառյալ՝ կանանց իրավունքը փոխելու իրենց գենդերի վերաբերյալ նշումը անձնագրում և այլ անձը նույնականացնող փաստաթղթերում:**

Ընտանեկան բռնության դեպքեր

Անձը «Տիկտոկ» սոցիալական ցանցում հրապարակել է տեսանյութեր, որտեղ բացահայտել է իր նույնասեռական կողմնորոշումը: Նրա ընտանիքի անդամները տեսել են տեսանյութերը, որտեղից իմացել են, որ նա գեյ է: Նրա մայրը և հայրը վիճաբանել են իր հետ, ասել, թե դա սխալ է, նույնասեռականությունը շեղվածություն է, հիվանդություն է: Ծնողները պահանջել են հեռանալ տնից, քանի որ չեն ցանկացել «գոմիկ պահել իրենց տանը»: Որոշ ժամանակ անց ծնողները դիմողին տուն են ետ բերել, որտեղ նրան զրկել են հեռախոսից: Հայրը փորձել է հարվածել տղային, սակայն մյուս հարազատները թույլ չեն տվել: Հայրը նշել է, որ չգիտի՝ կզսպի՞ իրեն, թե՞ կսպանի նրան: Անձին տեղափոխել են երեխաների աջակցության կենտրոն:

Մարզպետարանի աշխատակիցը Փինքի ներկայացուցչի հետ զրույցում ևս նշել է, որ նույնասեռականությունը նորմալ չէ, որ երեխայի հետ պետք է աշխատել, քանի որ երբ անձը անչափահաս է, չի հասկանում դա: Մանավանդ, եթե չի ունեցել սեռական հարաբերություն, չի կարող հստակ ասել իր կողմնորոշումը:

Բիսեքսուալ կնոջ ծնողները տեղեկացել են նրա սեռական կողմնորոշման մասին՝ տեսնելով նրա անձնական նամակագրությունը և լուսանկարները: Դրանից հետո ծնողները նրան փակի տակ են պահել իր կամքին հակառակ, շուրջ չորս ամիս թույլ չեն տվել դուրս գալ տնից: Այդ ընթացքում կտրել են նրա մազերը, ֆիզիկական բռնություն են գործադրել, քաշքշել են: Հայրը հոգեբանական ճնշում է գործադրել նրա նկատմամբ. պարբերաբար վիրավորական արտահայտություններ է հնչեցրել՝ կապված նրա սեռական կողմնորոշման հետ, ինչպես նաև սպառնացել է, որ կվնասի նրա զուգընկերուհու երեխային՝ հայտնելով, որ գիտի՝ որտեղ է սովորում երեխան, կգնա ու կսպանի նրան: Բացի այդ, նրան փորձել են «բուժել»՝ փոխել սեռական կողմնորոշումը՝ հոգեբույժի մոտ տանելով:

«Ինստագրամ» սոցիալական հարթակում կեղծ էջով օգտատերը անչափահաս անձի ծնողներին է ուղարկել նրա լուսանկարները, որոնք տուժածի կողմից դեռևս 2021թ. ամռանը տեղադրվել էին իր ինստագրամյան էջում և հետագայում ջնջվել էին: Տուժածի ծնողներին ուղարկված լուսանկարների բովանդակությունից հնարավոր էր տուժածին նույնականացնել որպես նույնասեռական անձ: Կեղծ ինքնությամբ օգտատերը ծնողներից պահանջել է չխոչընդոտել իր և տուժածի հանդիպմանը՝ հակառակ պարագայում սպառնալով հրապարակել այդ լուսանկարները: Մի քանի ժամ անց նույն օգտատերը տուժածի

ծնողներին է ուղարկել տուժածի մտերիմ ընկերներից մեկի լուսանկարները, որոնց բովանդակությունից հնարավոր էր այդ անձին նույնականացնել որպես նույնասեռական անձի: Ֆեյք օգտատերը տուժողի մասին ասել է՝ տեսեք, թե նա ում հետ է շփվում:

Անչափահաս անձի հայրը որդուն տուն է տարել, զրկել կապի միջոցներից և արգելել շփվել ԼԳԲՏ անձանց հետ, այցելել համայնքային կենտրոն, և ընտանիքով խստացրել են վերահսկողությունը տուժածի կյանքի նկատմամբ: Ստեղծված իրավիճակում տուժածը իր ընկերներից մեկին հայտնել է ինքնասպանություն գործելու մտադրության մասին:

Նույնասեռական կնոջ ընտանիքի անդամները տեղեկացել են նրա սեռական կողմնորոշման մասին. այդ պատճառով փորձել են նրան տանը փակի տակ պահել՝ զրկելով կապի միջոցներից: Սակայն նա փախել է տնից, և ընկերուհիների հետ գնացել այգի: Տուժողի հայրը գնացել է այգի՝ փորձելով աղջկան ուժի գործադրմամբ տանել տուն, սակայն վերջինս դիմադրել է և չի ցանկացել իր հոր հետ գնալ: Հայրը, ուժի գործադրմամբ հարվածելով տուժողի դեմքին, պարանոցին և ողնաշարին, նրան քաշելով տարել է մեքենայի մոտ, հայհոյանքներ է հնչեցրել տուժողի ընկերուհիների հասցեին: Տուժողի հայրը բռնություն է գործադրել նաև տուժողի ընկերուհիների նկատմամբ, ովքեր փորձել են տուժողին օգնել: Հայրը հարվածել է ընկերուհիներից մեկին, ում բերանից սկսել է արյուն հոսել: Այնուհետև, տուժողը հոր ձեռքերից կարողացել է փախչել, իսկ ընկերուհիներից մեկը ահազանգել է ոստիկանություն:

Անձի ընտանիքի անդամները՝ հայրը և քույրը, տեղեկացել են անձի սեռական կողմնորոշման մասին, ինչի պատճառով էլ վիճաբանություն է սկսվել: Անձը հեռացել է այգի, որտեղ կրկին վիճաբանություն է տեղի ունեցել: Անձի խոսքերով՝ վիճաբանության պատճառը իր սեռական կողմնորոշումն էր, և այն հանգամանքը, որ իրեն ուզում էին ամուսնացնել կնոջ հետ: Հայրը դիմողին ասել է, որ թույլ չի տա, որ նա դուրս գա տնից և շփվի որևէ մեկի հետ: Վիճաբանության արդյունքում անձը հարվածել է քրոջը, ինչից հետո ընտանիքի անդամները ոստիկանություն և հոգեբուժական բրիգադ են կանչել: Արդյունքում անձին հարկադիր կերպով տեղափոխել են հոգեբուժական հաստատություն: Անձը նշում է, որ նախկինում ստացիոնար բուժում է ստացել հոգեբուժարանում, սակայն այս դեպքում վիճաբանությունը պարզապես պատրվակ էր, իսկ հայրը իր սեռական կողմնորոշման պատճառով է ուզում, որ ինքը բուժում ստանա: Անձը ի սկզբանե համաձայնել է բուժում ստանալ, սակայն նաև նշում է, որ իրեն ստիպել են, որ համաձայնի, և ասել է, որ ուզեցել է դուրս գալ, ընկերոջը տեսնել, սակայն հայրը թույլ չի տվել:

Բիսեքսուալ աղջկա ընտանիքի անդամները նկատել են, որ նա շփվում է ոչ հետերոնորմատիվ արտաքինով անձանց հետ: Ընտանիքի անդամները փորձել են աղջկան արգելել շփվել իր ընկերների հետ, ասել են, որ նրանք վատ միջավայր են ստեղծում, բացասաբար են անդրադառնում աղջկա վրա, փորձել են վերահսկել նրա շփումները: Նրա զուգընկերուհու հետ ընտանիքի կոնֆլիկտից հետո վերցրել են նրա հեռախոսը, փակի տակ պահել, նաև

ծեծել են՝ հարվածելով մարմնի տարբեր մասերի, այդ թվում՝ գլխին: Դիմողը թաքուն է շփվել իր զուգընկերուհու հետ: Աղջկա քույրը տեղյակ է եղել նրա և զուգընկերուհու հարաբերությունների մասին, սպառնացել է, որ եթե չդադարեցնի շփվել իր զուգընկերուհու և նույնասեռական ընկերների հետ, ընտանիքի մյուս անդամներին կասի քրոջ կողմնորոշման մասին: Աղջիկը ստիպված է եղել թաքուն փախչել տնից, որպեսզի իրեն այլևս բռնության չենթարկեն: Դրանից հետո աղջկա ընտանիքի անդամները կապվել են նրա հետ, սպառնացել, որ եթե չհանդիպի իրենց հետ, ոստիկանություն կդիմեն: Աղջիկը ստիպված է եղել հանդիպել, հանդիպման ընթացքում ևս սպառնալիքների միջոցով փորձել են համոզել, որ վերադառնա տուն: Ընտանիքի անդամները սպառնացել են նաև զուգընկերուհուն, որ ոստիկանություն կդիմեն աղջկան առևանգելու համար, եթե նրանք չդադարեցնեն շփումը:

Տուժողը նախկինում բախվել է ոստիկանության խտրական վերաբերմունքին, երբ սպառնացել են, որ կբացահայտեն նրա կողմնորոշումը: Դրանից հետո դիմողը չի վստահում ոստիկանությանը: Բացի այդ՝ մարզային ոստիկանությունը ծանոթ է իր ընտանիքի անդամներին, ուստի ոստիկանությանը դիմելն արդյունք չի տա:

Ընտանիքն այն միավորն է, որտեղ անձը պետք է իրեն ապահով զգա և աջակցություն ստանա սոցիալական միջավայրում կայանալու համար: Հետևաբար, ընտանիքի անդամների կողմից բռնությունը անձի համար առավել ծանր հետևանքներ կարող է առաջացնել ոչ միայն ֆիզիկական, այլ նաև հոգեկան ամբողջականության խախտման տեսանկյունից: Ընտանիքում բռնության ենթարկված անձը դժվարությամբ է կարողանում գտնել իր իրավունքների պաշտպանության միջոցներ և հաղթահարել իր ինքնությամբ պայմանավորված իր դժվարին դրությունը: Տուժողների իրավունքների պաշտպանության տեսանկյունից առավել խնդրահարույց է անչափահաս անձանց նկատմամբ ընտանեկան բռնությունը, երբ բռնարարը տուժողի օրինական ներկայացուցիչն է և վերջինս ստիպված է շարունակել բնակվել բռնարարի հետ: Իրավակիրառ համակարգը չունի անձի պաշտպանության այնպիսի մեխանիզմ, որպեսզի կարողանա ապահովել իր ընտանիքի անդամի դեմ բողոք ներկայացրած անձի հետագա պաշտպանությունն ու ապահովումը: Այս է այն հիմնական պատճառներից մեկը, որ ընտանեկան բռնության տուժողները խուսափում են բողոք ներկայացնելուց:

Պետությունը, փաստորեն, որևէ աշխատանք չի տանում բարձրացնելու համար հասարակության իրազեկվածությունը սեռականության և բռնության արգելքի շուրջ: Տարիներ շարունակ ընտանեկան բռնության դեպքերը ԼԳԲՏ անձանց նկատմամբ չեն նվազում: Հասարակության շրջանում դեռևս բացասաբար են ընդունվում նույնասեռական, բիսեքսուալ և տրանսգենդեր անձինք, իսկ բռնության պրակտիկան ընտանիքի անդամի հանդեպ ընկալվում է որպես նորմալ և տրամաբանական: Մյուս կողմից պետությունը ձախողել է նաև իրավական պաշտպանության արդյունավետ մեխանիզմների ձևավորումը: Ընտանեկան բռնության դեմ օրենքի ընդունումից հետո, իհարկե, քայլեր ձեռնարկվել են իրավապահ մարմինների կողմից ընտանեկան բռնության դեպքում հետագա նման դրսևորումները կանխելու ուղղությամբ, սակայն ԼԳԲՏ անձանց պարագայում գործնականում որևէ արդյունավետ միջոց դեռևս չի կիրառվում: Ընտանեկան

բռնության զոհ դարձած անձը իրեն ապահով չի զգում անգամ իրավապահ մարմիններին դիմելիս, քանի որ չունի որևէ երաշխիք, որ կրկին չի վերադառնա իրեն բռնության ենթարկած անձանց ընտանիք, որոնցից հաճախ կախված է նաև ֆինանսապես:

ԲԱԺԻՆ 2.

ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ԼԳԲՏ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ

Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 42

Խոսքի ազատությունը՝ որպես ժողովրդավարական հասարակության հիմնասյուներից մեկը, ներառում է արտահայտման գրեթե ցանկացած ձև ու բովանդակություն պարունակող խոսքը՝ ներառյալ անձի գենդերային ինքնությունն ազատորեն արտահայտելու իրավունքը, որն ընդգրկում է գաղափարներ, կարծիքներ և տեղեկատվություն անձի ինքնության վերաբերյալ: Խոսքի ազատությունը բացարձակ իրավունք չէ և ենթակա է որոշակի սահմանափակումների:[34] Այն ներառում է գաղափարներ և կարծիքներ արտահայտելու ազատությունը, բայց միևնույն ժամանակ պարտականություն է սահմանում խուսափել անձի նկատմամբ այնպիսի արտահայտություններից, որոնք պարունակում են վիրավորանք այլ անձանց նկատմամբ, խախտում են նրանց իրավունքները:[35] Մասնավորապես, խոսքի ազատության իրավունքը չի ենթադրում ատելության խոսքի ազատություն:[36]

Ատելության խոսքի կարգավորումները

Ատելության խոսքի սահմանումը դեռևս չունի մեկ համընդհանուր կերպով ճանաչված ձևակերպում, սակայն գործնականում՝ միջազգային մարմինների կողմից տրվել են պայմանական մեկնաբանություններ:

Ատելության խոսք կարող են համարվել արտահայտման այն բոլոր ձևերը, որոնք տարածում, դրդում, խրախուսում կամ արդարացնում են ռասսայական ատելությունը, այլատյացությունը (քսենոֆոբիան), հակասեմիտիզմը կամ ատելության այլ ձևերը՝ հիմնված անհանդուրժողականության վրա, ներառյալ՝ արտահայտված ծայրահեղ ազգայնականությամբ և ազգակենտրոնությամբ (էթնոցենտրիզմով) անհանդուրժողականությունը, փոքրամասնությունների, ներգաղթյալների (միգրանտների) և միգրանտային ծագում ունեցող անձանց նկատմամբ խտրականությունը և թշնամանքը:[37]

ՄԱԿ-ի Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին դաշնագրի 19(2)-րդ հոդվածը ճանաչում է արտահայտման ազատությունը, հաստատելով, որ «Յուրաքանչյուր մարդ ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք. այդ իրավունքն ընդգրկում է, անկախ պետական սահմաններից, բանավոր, գրավոր կամ մամուլի միջոցով կամ էլ գեղարվեստական ձևով արտահայտված կամ մի այլ ձևով սեփական ընտրությամբ ամեն տեսակի ինֆորմացիա ու գաղափարներ

34 UN Human Rights Committee, General Comment No. 34 https://www2.ohchr.org/english/bodies/hrc/docs/gc34.pdf
35 Erbakan v Turkey, No 59405/00
36 UN Human Rights Committee, General Comment No. 11
37 Recommendation No. R (97) 20 of the Committee of Ministers to Member Stateson “Hate Speech”, 1997. https://bit.ly/2wa4QoE

որոնելու, ստանալու և տարածելու ազատությունը»:[38]

Դաշնագրի 19-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել հետևյալ պայմանների առկայության դեպքում.

- *ա) պետք է սահմանվեն օրենքով և լինեն անհրաժեշտ,*
- *բ) ուղղված լինեն այլ անձանց իրավունքներն ու հեղինակությունը հարգելուն, պետական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ բարոյականության պահպանությանը,*
- *գ) լինեն անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում այս շահերի պաշտպանության համար: Այս պայմաններից միայն մեկի կամ երկուսի առկայությունը բավարար չէ, որպեսզի սահմանափակումը համարվի օրինական:*

Դաշնագրի 20(2)-րդ հոդվածով սահմանվում է. «2. Ազգային, ռասսայական կամ կրոնական ատելության օգտին որևէ ելույթ, որն իրենից ներկայացնում է խտրականության, թշնամանքի կամ բռնության հրահրում, պետք է արգելվի օրենքով»:

Ատելության խոսքը դրսևորվում է ոչ միայն բռնությունների, խտրականության կոչերով կամ դրանց արդարացմամբ և ջատագովությամբ, այլ նաև վիրավորական, նվաստացուցիչ, թշնամական վերաբերմունքով, անհանդուրժողականության սերմանմամբ որոշակի խմբերի նկատմամբ: Այն մի դեպքում կարող է հանգեցնել անձանց խմբերի կամ անհատների նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների, մյուս կողմից կարող է խախտել որոշակի հատկանիշներով առանձնացող անձանց հոգեբանական ամբողջականությունը՝ պատճառելով հոգեկան տառապանք կամ ճնշվածություն:

Ատելության խոսքը որոշ երկրների օրենսդրությամբ հասցեավորված է տարբեր մակարդակներում: Օրինակ՝ Կանադայի, Իսլանդիայի, Մեծ Բրիտանիայի, Ֆինլանդիայի, Ֆրանսիայի, Նիդերլանդների և այլ երկրների օրենսդրությամբ ատելության խոսքի համար նախատեսված է քրեական պատասխանատվություն:[39]

Ատելության խոսքի համար նախատեսված պատասխանատվությունը պայմանավորված է դրա ծանրությամբ: Ատելության խոսքի ծանրությունը որոշելու համար հաշվի են առնվում հետևյալ հանգամանքները՝[40]

- *Համատեքստը, որում այն հնչում է.*
- *Դրա հեղինակը, նրա դերը, հասարակության կողմից նկատմամբ վերաբերմունքն ու վստահության աստիճանը,*
- *Նպատակը. կարևոր է՝ արդյոք նման խոսքը հնչեցվել է դիտավորյա՞լ՝ որոշակի հետևանք առաջացնելու նպատակո՞վ, թե անզգուշությա՞մբ,*

38 International Covenant on Civil and Political Rights, 1966, Article 19(2)
39 Համապատասխան օրենսդրական կարգավորումները հետևյալ հղումներով՝
Կանադա. https://laws-lois.justice.gc.ca/eng/acts/C-46/section-318.html,
Իսլանդիա. https://www.government.is/library/Files/General_Penal_Code_sept.-2015.pdf,
Մեծ Բրիտանիա. http://www.legislation.gov.uk/ukpga/2003/44/section/146,
Ֆինլանդիա. http://www.finlex.fi/fi/laki/kaannokset/1889/en18890039.pdf,
Ֆրանսիա. https://www.legifrance.gouv.fr/affichCode.do?cidTexte=LEGITEXT000006070719&dateTexte=20181010,
Նիդերլանդներ. https://wetten.overheid.nl/BWBR0001854/2018-09-19
40 Annual report of the United Nations High Commissioner for Human Rights, 2013, Report of the United Nations High Commissioner for Human Rights on the expert workshops on the prohibition of incitement to national, racial or religious hatred. https://digitallibrary.un.org/record/746343

- *Բովանդակությունը. կարևոր է, թե խոսքը որքանով է ազդեցիկ և որքանով կարող է որոշակի վնաս պատճառել,*
- *Տարածման միջոցները, լսարանը. կարևոր է, թե ինչ ծավալի հանրային տարածում է գտել խոսքը,*
- *Ռիսկայնությունը:*

Այս հանգամանքների վերլուծությունից ելնելով կարող է տարանջատվել ատելության խոսքի համար պատասխանատվության աստիճանը: Այնպիսի իրավիճակում, երբ հանրության 95 տոկոսը բացասական դիրքորոշում ունի նույնասեռական և տրանսգենդեր անձանց նկատմամբ,[41] ատելության խոսքի նույնիսկ ամենաանվնաս թվացող դրսևորումը կարող է խորացնել հասարակության բևեռացումն ու հանգեցնել իրավախախտումների: Այն դեպքում, երբ ատելության խոսքի հեղինակը պետական պաշտոնատար անձ է, դրա վտանգավորության աստիճանն առավել բարձր է ոչ միայն պաշտոնյայի վայելած հեղինակության բերումով, այլ նաև՝ պայմանավորված անպատժելիության մթնոլորտի ձևավորմամբ:

Ատելության խոսքի վտանգավորությունը կարող է ավելի բարձր լինել՝ պայմանավորված դրա հեղինակի ինքնությամբ, նրա դերով և հասարակության շրջանում վարքագծով: Մասնավորապես, առավել վտանգավոր է համարվում պաշտոնատար անձանց կողմից արտահայտված ատելությունը, քանի որ նրանք ի պաշտոնե հանդիսանում են որոշում կայացնող, հանրային քաղաքականություն մշակող մարմինների ներկայացուցիչներ, ըստ այդմ, նաև հասարակության շրջանում կարծիք ձևավորողներ: Քաղաքական և կրոնական առաջնորդները պետք է ձեռնպահ մնան անհանդուրժող կոչեր կամ արտահայտություններ օգտագործելուց, որոնք կարող են հրահրել բռնություն, թշնամանք կամ խտրականություն: Նրանք նաև որոշիչ դեր ունեն անհանդուրժողականության, խտրական կարծրատիպերի և ատելության խոսքի դեպքերի դեմ խոսելու առումով:[42]

Անզգուշաբար հնչած ատելության խոսքը, պետք է արժանանա քննադատության և որոշ դեպքերում, նույնիսկ, պատասխանատվության հանգեցնի, սակայն այս դեպքում քրեական պատասխանատվությունը պարտադիր չէ: Մասնավորապես, այդպիսի արտահայտությունները կարող են դատապարտվել պետական պաշտոնատար անձանց կողմից, կարող է նախատեսվել նաև կարգապահական պատասխանատվության միջոցներ, ինչպես պետական մարմինների ծառայողների, այնպես էլ՝ մասնագիտական հանրույթների ներկայացուցիչների համար՝ որպես էթիկայի խախտում: Խոսքի բովանդակության վերլուծության համար հատկապես կարևոր է դրա հետևանքների գնահատումը. այն կարող է անձանց որոշակի խմբի պահել վախի մթնոլորտի և հոգեբանորեն ճնշված վիճակում՝ անընդհատ սպառնալիքի ներքո: Ատելության խոսքի հասանելիությունը, այսինքն, տարածումը հանրության լայն շրջանում, պայմանավորված է ինչպես այն հանգամանքով, թե որտեղ է այն հնչել, այնպես էլ նրանով, թե արդյոք այն տարածվել է զանգվածային լրատվության միջոցներով, թե ոչ: ԶԼՄ-ների կողմից

41 «Նախապաշարումներից հավասարություն. Հայաստանում ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ հասարակության վերաբերմունքի ուսումնասիրություն», «Փինք» իրավապաշտպան ՀԿ, 2016 թ. https://www.pinkarmenia.org/wp-content/uploads/2016/06/From-Prejudice-to-Equality-Armenian.pdf
42 Annual report of the United Nations High Commissioner for Human Rights, 2013, Report of the United Nations High Commissioner for Human Rights on the expert workshops on the prohibition of incitement to national, racial or religious hatred. https://digitallibrary.un.org/record/746343

նման խոսքի տարածումը ևս պետք է ստանա իրավական գնահատական: Ի վերջո, ատելության խոսքը պետք է լինի իրական և հստակ, այսինքն, խոսքում օգտագործված արտահայտությունները պետք է կամ պարունակեն հստակ թշնամանք, որոշակի հատկանիշով պայմանավորված վիրավորանք, բռնության, խտրականության կոչեր կամ պետք է ընկալելի լինեն որպես այդպիսին. դրա ոչ միանշանակ ընկալումը նվազեցնում է վտանգավորության աստիճանը:

Ներպետական իրավակարգավորումները

2022 թ.-ի ընթացքում ուժի մեջ է մտել նոր քրեական օրենսգիրքը, որի 330-րդ հոդվածով քրեական պատասխանատվություն է նախատեսված անձի կամ անձանց խմբի նկատմամբ ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված բռնություն գործադրելու հրապարակային կոչը, նման բռնությունը հրապարակայնորեն արդարացնելը կամ քարոզելը, ինչպես նաև այդ նպատակով նյութ կամ առարկա տարածելու համար:[43] Այս հանցակազմը նախատեսված էր 2020 թ.-ի ապրիլից ի վեր՝ նախկին քրեական օրենսգրքում լրացման տեսքով, սակայն դեռևս արդյունավետ կերպով չի գործել սեռական կողմնորոշմամբ կամ գենդերային ինքնությամբ պայմանավորված բռնության կոչերի դեպքում: Հանցագործության մասին հաղորդումների հիման վրա քրեական գործեր չեն հարուցվել հիմնակա-նում այն պատճառաբանությամբ, որ ենթադրյալ իրավախախտը իրացրել է իր արտահայտման ազատությունը կամ որ նրա արտահայտությունները իրական վտանգ չեն սպառնում և դրանք կատարվել են պահի ազդեցության տակ: Հարկ է նշել, որ բռնության հրապարակային կոչերի հանցակազմը ձևական է, այսինքն՝ դրանով նախատեսված արարքի համար քրեական պատասխանատվությունը վրա է հասնում անկախ հետևանքներից: Ինչպես նախորդ բաժնում նկարա-գրված է, ատելության խոսքի պարագայում էական չէ, թե հենց այդ խոսքը դարձել է բռնության պատճառ, թե ոչ: Ինքնին թշնամական, վիրավորական արտահայտությունները, խտրականության կամ բռնության կոչերը համարվում են միջամտություն անձի մասնավոր կյանքի իրավունքի նկատմամբ՝ առաջին հերթին, այնուհետև՝ նաև համայնքի յուրաքանչյուր ներկայացուցչի իրավունքի նկատմամբ, քանի որ եթե անգամ խոսքը մեկ անձի է ուղղված, սակայն պայմանավորված է նրա սեռական կողմնորոշմամբ կամ գենդերային ինքնությամբ, ապա վնասում է նաև նույն հատկանիշը կրող մյուս անձանց:

Նոր քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածը պատասխանատվություն է նախա-տեսում ռասայի, ազգի, էթնիկական կամ սոցիալական ծագման, կրոնի, քաղա-քական կամ այլ կարծիքի կամ այլ հիմքերի վրա անձի կամ խմբի նկատմամբ անձնական կամ սոցիալական բնույթի հանգամանքներով պայմանավորված ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշնամություն հրահրելուն կամ քարոզելուն ուղղված խոսքի, ինչպես նաև այդ նպատակով նյութերի կամ առարկաների տարածման համար:[44]

Ինչպես նկարագրված է սույն զեկույցի «Պետության պարտավորությունները

43 Քրեական օրենսգիրք, Հոդված 330 https://www.arlis.am/documentview.aspx?docID=153080
44 Քրեական օրենսգիրք, Հոդված 329 https://www.arlis.am/documentview.aspx?docID=153080

մարդու իրավունքների ապահովման և խտրականության կանխարգելման ուղղությամբ» բաժնում, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Օգանեզովան ընդդեմ Հայաստանի գործով իր վճռով անդրադարձել է նաև ատելության խոսքը կարգավորող քրեական նորմին, նշելով, որ դրա առկայությունը բավարար չէ, այն պետք է արդյունավետ պաշտպանություն նախատեսի սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով բռնության կոչերի դեպքում:

Այսինքն, ՀՀ օրենսդրությամբ քրեական պատասխանատվություն է նախատեսված ատելության խոսքի առավել վտանգավոր դրսևորման, այն է՝ բռնության հրապարակային կոչերի կամ բռնության արդարացման համար: Միևնույն ժամանակ, դրա կիրառումը դեռևս արդյունավետ հնարավոր չէ համարել, քանի դեռ այն ԼԳԲՏ անձանց նկատմամբ բռնության կոչերի դեպքում չի ծառայել որպես իրավական պաշտպանության մեխանիզմ:

ԼԳԲՏ անձանց խնդիրների շահարկումը և ատելության խոսքը 2022 թ.-ի ընթացքում

Ռուս-ուկրաինական պատերազմի համատեքստում տարածված շահարկումները. Ռուսաստանի կողմից Ուկրաինայի դեմ սանձազերծված պատերազմի արդյունքում Հայաստան տեղափոխվեցին որոշ թվով ուկրաինացիներ: «Փինք» իրավապաշտպան կազմակերպությունը, որը իր գործունեության շրջանակներում աջակցություն է տրամադրում ոչ միայն ՀՀ քաղաքացիներին, այլ նաև երկրի տարածքում գտնվող քաղաքացի չհանդիսացող ԼԳԲՏ անձանց, հայտարարություն[45] տարածեց, որում նշում էր, որ կազմակերպությունը պատրաստ է իրավաբանական, սոցիալական աշխատողի և հոգեբանի աջակցություն տրամադրել Ուկրաինայից պատերազմի պատճառով տեղահանված ԼԳԲՏ անձանց: Ուկրաինայի քաղաքացիների առանձնացումը պայմանավորված էր այն հանգամանքով, որ վերջիններս իրենց երկիրը լքել են իրենց կամքից անկախ՝ այլ պետության ագրեսիայի հետևանքով և գտնվում են նվազ բարենպաստ իրավիճակում: Այս հայտարարությունը պրոռուսական որոշ ուժերի կողմից շահարկումների առիթ դարձավ: Մասնավորապես, ԼԳԲՏ համայնքը թիրախավորվեց այն կոնտեքստում, որ վերջինս աջակցում է Հայաստանի բարեկամ Ռուսաստանի թշնամուն: Կազմակերպությունը նախ թիրախավորվեց պրոռուսական տելեգրամյան ալիքների[46] կողմից, որտեղ գրառումներում նշվում էր, թե ԼԳԲՏ համայնքը, ի դեմս «Փինք» իրավապաշտպան ՀԿ-ի, աջակցում է Ուկրաինային. հեղինակը հարց էր հնչեցնում, թե ում է հայտնի՝ ովքեր են հայտարարության հեղինակները: Գրառումը ուղեկցվեց ատելություն պարունակող խոսքով: Վիրավորանքներն ու ատելության խոսքը ուղղված էին մի կողմից ԼԳԲՏ համայնքին ընդհանուր առմամբ, մյուս կողմից՝ կազմակերպությանը, որը մեղադրվում էր հակահայկական գործունեություն ծավալելու մեջ՝ այն պատճառաբանությամբ, որ Ռուսաստանը Հայաստանի միակ դաշնակիցն է, և նրա շահերին հակասող գործունեությունը հակասում է նաև Հայաստանի շահերին:

45 Հայտարարություն 01.03.2022 թ. https://www.facebook.com/pinkarmenia/photos/10160009287230238
46 Telegram, SisMasis https://t.me/sisumasis/29296; ARMENIA INFO https://t.me/armnewz/4540

Բացի սոցիալական ցանցերից, մի հոդվածով հարցին է անդրադարձել նաև «Իրավունք» թերթը նշելով, թե ԼԳԲՏ անձանց պաշտպանությամբ զբաղվողները սեպ են խրում հայ-ռուսական հարաբերություններում: Հոդվածում մասնավորապես ասվում է.

«Ահա, թե ովքեր են այս լարված իրավիճակում սեպ խրում հայ-ռուսական ռազմավարական դաշնակցային հարաբերությունների մեջ: Եվ այսքանից հետո հարց է ծագում՝ ինչո՞ւ Ուկրաինայի համար մտահոգ այս անձինք, օրինակ, պատրաստակամություն չեն հայտնել գնալ ու կռվել ուկրաինական զորքերի կողմից, կամ ինչո՞ւ դիտորդի կարգավիճակում մնացին արցախյան պատերազմի ժամանակ, և այսօր ռուս խաղաղապահներն են պաշտպանում արցախցուն, իսկ իրենք զբաղված են դեռ Ռուսաստանի վրա «ցեխ շպրտելով»: Սակայն առավել ուշագրավ է այն, որ «Սասնա ծռերի» ԱԺԲ-ն, Խզմայլանի Եվրոպական կուսակցությունն ու ԼԳԲՏ-ականները հայտնվել են մեկ ճամբարում՝ իրենց աջակցությունը հայտնելով Ուկրաինային»:[47]

Այսպիսով, նպատակ ունենալով ազդեցություն գործել Ռուսաստանի նկատմամբ հասարակության շրջանում առկա հակասական տրամադրության վրա, այս ուժերը փորձում են օգտագործել ԼԳԲՏ անձանց նկատմամբ տարածված հոմոֆոբիան՝ այն կապելով Ռուսաստանի հակառակորդ Ուկրաինայի հետ: Մի կողմից փորձ է արվում պատկեր ստեղծել, թե ԼԳԲՏ անձինք Ուկրաինային են աջակցում՝ դեպի Ռուսաստանը գրավելով հոմոֆոբ զանգվածի համակրանքը, մյուս կողմից՝ կրկին բացասական լույսի ներքո են դիտարկվում ԼԳԲՏ անձինք, ինչը խորացնում է նախապաշարումներն ու անհանդուրժողականությունը:

Պատերազմի շրջանակներում նաև ծաղրի առարկա դարձավ Ուկրաինայի բանակի կողմից ԼԳԲՏ անձանց մասնակցությունը պատերազմին: Առիթը լուսանկարների և տեսանյութերի տարածումն էր, որտեղ երևում էր, թե ինչպես են ռազմական գործողություններին մասնակցում բաց ԼԳԲՏ անձինք: Տեղեկատվությունը տարածվել է տելեգրամյան ալիքներում, որոնք տարածել են ռուսական ալիքներում շրջանառվող լուրերը՝ հետևյալ մեկնաբանությամբ. *«Ուկրաինայում տարածվում են գովազդային հոլովակներ, որտեղ ոչ ավանդական կողմնորոշումներով զինծառայողները կանչում են իրենց հետ ջոկատներում ծառայելու: ...Սոց. ցանցերի օգտատերերի, տեղի բնակիչների և ուկրաինացի զինվորականների շրջանում ԼԳԲՏ գումարտակի ստեղծումը հակասական արձագանք է առաջացրել: Քչերն են համամիտ միասեռականների նման հայրենասիրական արարքի ջատագովների հետ»:*[48]

Այս պարագայում, փաստորեն, ԼԳԲՏ անձանց նկատմամբ բացասական վերաբերմունքը օգտագործվել է Ուկրաինական բանակը վարկաբեկելու համար՝ պրոռուսական քարոզչության շրջանակներում: Միևնույն ժամանակ, ԼԳԲՏ անձանց հասցվել է հոգեբանական վնաս, քանի որ հերթական անգամ ԼԳԲՏ համայնքը ներկայացվել է որպես բացասական երևույթ՝ խորացնելու ատելության մթնոլորտը:

47 Iravunk.com, Ովքեր են Հայաստանից աջակցում Ուկրաինային
48 Lurer.com, ԼԳԲՏ ջոկատ Ուկրաինայում. հրապարակվել են սկանդալային կադրեր (տեսանյութ) https://lurer.com/?p=455892&l=am

Փինք իրավապաշտպան ՀԿ-ի հիմնադիր, Մարդու իրավունքների տուն Երևանի նախագահ **Մամիկոն Հովսեփյանին շարունակաբար թիրախավորվել է՝** ասոցացվելով իշխանությունների հետ:[49]

ԼԳԲՏ անձանց թիրախավորման մեկ այլ առիթ էր ՀՀ նախագահի նշանակմանն ընդառաջ քննարկումները, երբ լուրեր տարածվեց, թե նախագահի թեկնածուն Արայիկ Հարությունյանն է: Որոշ ընդդիմադիր շրջանակներ փորձեցին իշխող ուժին կրկին կապել ԼԳԲՏ համայնքի հետ: Արայիկ Հարությունյանին վարկաբեկելու փորձ արվեց՝ անդրադարձ կատարելով նախկինում նրա անվան շուրջ տարածված լուրերին, թե նա կապեր ունի ԼԳԲՏ անձանց հետ: Հիշեցնենք, որ երբ Արայիկ Հարությունյանը զբաղեցնում էր Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի պաշտոնը, քաղաքացիների ընդունելության շրջանակներում նա հանդիպել էր տրանսգենդեր անձի՝ հայտնի Կարաբինա անվամբ՝ վերջինիս անձնական խնդրի կապակցությամբ: Հանդիպման լուսանկարը տեղադրվել էր նախարարության կայքում, ինչից հետո հոմոֆոբ խմբերը այն տարածել էին և ստահոդ լուրերով փորձել վարկաբեկել կառավարությանը: Վահե Եփրիկյան անունով օգտատերը կիսվել է նշված հանդիպման ժամանակ արված նկարով, գրելով. «ՀՀ հավանական Նախագահն ու Առաջին Տիկինը»:[50]

Հասարակության շրջանում բավականին լայն լսարան ունեցող քաղաքական գործիչ Նաիրա Զոհրաբյանը ևս անդրադարձել է այս հարցին, նշելով՝ *«Խոսքը վերաբերում է տրանսգենդեր Կարաբինայի «մտերիմ» գործընկեր, ԿԳՄՍ նախկին նախարար, ներկայումս վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանի մասին»:*[51]

Ատելության տարածման մեկ այլ առիթ է դարձել նորանշանակ Մարդու իրավունքների պաշտպան Քրիստինե Գրիգորյանի հարցազրույցը: Վերջինս, պատասխանելով այն հարցին, թե արդյո՞ք պատրաստ է զբաղվել ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանությամբ, նշել է. «Գիտեմ, թե ինչ խարանավորման է արժանանում ԼԳԲՏ համայնքը, ինչը շատ ցավալի է, շատ պարզ է, որ զբաղվելու եմ նաև նման իրավիճակում հայտնված խոցելի մարդկանց իրավունքներով, որովհետև մարդու իրավունքները հավասար են: Միանշանակ, Հայաստանում ԼԳԲՏ համայնքի նկատմամբ առկա է խտրական վերաբերմունք, այդ անձինք ցավալիորեն թիրախավորվում են»:[52]

Այս հայտարարությունից հետո, որպես իշխանության կողմից նշանակված ՄԻՊ, թիրախավորվեց Քրիստինե Գրիգորյանը: *«Իսկ դուք ասում էիք ,որ սա միայն նիկոլի համայնքի պաշտպանն է: Դե տեսեք, թե լգբտ համայնքը ինչպիսի ջատագով ունի: Չնայած սրանք մի ընդհանուր համայնքում են. լգբտ: Երեկ է նշանակվել, իսկ այսօր արդեն ՀՀ-ում (ամենակարևոր) հարցն է բարձրացնում, ու մեր դեմ: ... Հ. Հ.ում էլ առաջնային ուրիշ խնդիր չկա, որ բարձրաձայնի՝ անտուն մնացածներ, ադրբեջանցիների կողմից ամենօրյա ռեժիմով ահաբեկչության են-*

49 Facebook.com, Հովհաննես Իշխանյան, 05.30.2022-ի գրառում https://www.facebook.com/1037606250/posts/10222205777586874/
50 Facebook.com, Վահե Եփրիկյան, ՀՀ հավանական Նախագահն ու Առաջին Տիկինը https://bit.ly/3KHMlZt
51 Facebook.com, Naira Zohrabyan, Տրանսգենդեր Կարաբինայի գործընկերը՝ ՀՀ նախագա՞հ https://www.facebook.com/n.zohrabyan/videos/6838461376226032/?t=0
52 Ազատություն, Ֆեյսբուքյան ասուլիս, «Օրենքը պաշտպանին տալիս է բոլոր երաշխիքները գործելու անկախ». մարդու իրավունքների նորընտիր պաշտպան https://www.youtube.com/watch?v=CN9ukSXkYRA&t=2272s

թարկվող սահմանամերձ բնակիչներ, ինչու չէ քաղաքական հայացքների համար դատապարտված քաղաքացիներ և այլն: Չէ՛, Հայաստում համար մեկ խնդիրը լգբտ համայնքն է. հալածվում է»:[53]

Մի փաստաբան Քրիստինե Գրիգորյանի նշանակումը և Արայիկ Հարությունյանի՝ նախագահ նշանակվելու վերաբերյալ լուրերը համադրել է՝ տարածելով վիրավորական գրառում:[54]

ԼԳԲՏ անձանց խնդիրներին վերաբերող ստահոդ լուրերի տարածումը շարունակվել է նաև ընդդիմադիր ուժերի կողմից, ովքեր այդ կերպ փորձում են մանիպուլացնել հասարակության նախապաշարմունքային տրամադրությունը սեռափոխության և նույնասեռ ամուսնությունների հետ: Դրանք ամենաանտրամաբանական ձևերով կապվում են իշխող քաղաքական ուժի հետ՝ նպատակ ունենալով վարկաբեկել վերջինիս և ստանալ քաղաքական դիվիդենտներ:

Իշխող քաղաքական ուժին վարկաբեկելու նպատակով տարածվել է նաև այն միտքը, թե 2018 թ.-ի հեղափոխությունից հետո Հայաստանում աճել է ԼԳԲՏ անձանց թիվը: Փաստաբան, Փաստաբանների պալատի նախկին նախագահ Արա Զոհրաբյանը ֆեյսբուքյան իր էջում գրել է, թե 2018 թվականից հետո իշխանության անվերապահ աջակցության շնորհիվ Հայաստանում աճել է նույնասեռական և տրանսգենդեր անձանց թիվը՝ *«Նիկոլի «հաջողությունները». մարմնավաճառների թվի աճը՝ 177%, նույնասեռականներինը՝ 150%, տրանսգենդերինը՝ 676%»*, և թե դա լուրջ մտահոգությունների առիթ է տալիս, քանի որ նույնասեռական անձիք, տրանսգենդեր մարդիկ հայ հասարակության մեջ տեղ չունեն և *«իրենց թվի աճը մեծ վտանգ է ներկայացնում ազգային ինքնության պահպանման համար»:*[55]

Եթե ֆեյսբուքյան լսարանը սահմանափակ է և Արա Զոհրաբյանի գրառումները հասնում են իրեն հետևող անձանց շրջանակին, ապա լրատվամիջոցները հոգացին, որպեսզի այս հիմնազուրկ տվյալները առավել լայն տարածում գտնեն:[56]

Հավաքի ժամանակ, շարունակելով իր այս միտքը, Արա Զոհրաբյանը նշել է. *«Դուք լավ գիտեք, որ 2018թ.-ից այլասերվածության հետ կապված նոր քաղաքականություն սկսեց իրականացնել այս իշխանությունը: Այդ ընթացքում մենք ականատեսը եղանք մի շարք իրադարձությունների: Իշխանության գալուց հետո սկսեցին վավերացնել Ստամբուլյան կոնվենցիան, որն իբրև ընտանեկան պաշտպանությանն է վերաբերում: ... Այդ կոնվենցիայից ենթադրում էր նոր սեռ՝ «սոցիալական սեռ» հասկացությունը: Այսինքն՝ տղամարդը կարող էր որոշել, որ ինքը կին է և հասարակությունը պետք է այդ տղամարդուն ընդուներ որպես կին: Եթե մեկն ասում է՝ «ես Նապոլեոնն եմ», իրեն տանում են հոգեբուժարան, իսկ եթե մի տղամարդ ասում է՝ « ես կին եմ», իր իրավունքներն են պաշտպանում»:*[57]

53 Facebook.com, Vardan Minasyan-ի անձնական էջից https://www.facebook.com/photo/?fbid=5028094900569808&set=a.873254676053872
54 Facebook.com, Narek Samsonyan-ի անձնական էջից https://www.facebook.com/samsonyan.narek/posts/5038019122927872
55 Facebook.com, Արա Զոհրաբյան, ԱՅՍ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՋՈՂՎԱԾ ՈԼՈՐՏՆԵՐԸ: ԱՐԹՆԱՑԵՔ, ՔԱՆԻ ԴԵՌ ԿԱՐՈՂ ԵՆՔ ՄԻԱՍԻՆ ՓՐԿԵԼ ՄԵՐ ԵՐԿԻՐԸ https://www.facebook.com/permalink.php?story_fbid=3285159991715388&id=100006642580999
56 Panorama.am, Արա Զոհրաբյան. Կա մի ոլորտ, որտեղ այս իշխանությունն առաջընթաց ունի https://shorturl.at/iORT8
57 Panorama.am, 2021թ.-ին 2018թ.-ի համեմատ Հայաստանում տրանսգենդերների թիվը աճել է 676, իսկ նույնասեռականների թիվը՝ 150 տոկոսով. Արա Զոհրաբյան https://shorturl.at/mPTXY

Ընդդիմադիր «Դիմադրություն» շարժման հանրահավաքի ընթացքում գրականագետ Սերժ Սրապիոնյանն ասել է. *«Այս իշխանություններն իրենց կեղտոտ թաթերը մղում են դեպի մեր հոգիները, մեր ավանդական հայկական հոգիները պղծել են ուզում: Մամուլում շրջանառվում է, որ պատրաստված է նախագիծ սեռափոխության մասին, որով թույլ են տալու նույնասեռականներն ամուսնանան և գրանցվեն պետականորեն, մեզ ուզում են կտրել մեր արմատից՝ դարձնելով չհայ»:*[58]

Ընդդիմադիր ուժերին աջակցող մեդիաներից մեկում՝ Yerevan. Today առցանց պարբերականում, մի հոդված հրապարակվեց, որտեղ հեղինակ Սյուզի Բաղդասարյանը գրում է. *«Ընդդիմության վերսկսած բողոքի ցույցերը, պարզվում է, հետաձգել են մի վտանգավոր և սկանդալային օրենքի ընդունում, որով Փաշինյանի կառավարությունը պետք է բժշկական ու սոցիալական արտոնություն տար տրանսգենդերներին և նույնասեռականներին՝ առհասարակ: Yerevan.Today-ի ձեռքի տակ է հայտնվել մի փաստաթուղթ, որում հստակ, սևով սպիտակի վրա գրված է՝ ՀՀ Կառավարությանն առաջարկվում է նույնասեռական տղամարդկանց առնվազն երեք ոլորտներում արտոնել նոր իրավունքներով՝ ընդհուպ սեռափոխության անվճար վիրահատություն, հետևաբար ամուսնության և նույնասեռականներին զագսավորելու փաստաթղթային խնդիրները լուծել»:*[59]

ԼԳԲՏ համայնքը թիրախավորվել է նաև այն բանից հետո, երբ ՀՀ-ում ԱՄՆ-ի դեսպանը ֆեյսբուքյան իր էջում հրապարակել է լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր, քվիր և ինտերսեքս (ԼԳԲՏՔԻ+) անձանց Փրայդ ամսվա առիթով կազմակերպված ընդունելությանը վերաբերյալ լուրը:[60] Գրառումներ ու հոդվածներ են տարածվել այն մեկնաբանությամբ, թե ՀՀ իշխանություններին աջակցող ԱՄՆ դեսպանությունը սերտորեն կապված է նաև ԼԳԲՏ համայնքի հետ: «Հրապարակ» օրաթերթը գրել է. *«Հայաստանում ԱՄՆ դեսպան Լին Թրեյսին, Նիկոլ Փաշինյանին և գործող իշխանություններին աջակցող հայտարարություններ անելուց զատ, զբաղվում է նաև սեռական փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությամբ: Նախօրեին նա և Հայաստան ժամանած ԱՄՆ պետքարտուղարի փոխտեղակալ Կարա ՄքԴոնալդը հանդիպել են հայաստանյան ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչների հետ, և, ըստ որոշ տեղեկությունների, տեղեկացրել, որ հայաստանյան իշխանությունների հետ նրանց իրավունքների պաշտպանությանն ուղղված քայլեր են մշակում: Հանդիպման մասնակիցներից ոմանք տարածում էին ամերիկացիների հետ հանդիպման նկարները և շնորհակալություն հայտնում հեռացող դեսպան Թրեյսիին՝ իրենց աջակցելու համար»:*[61] Նպատակը կրկին իշխանություններին որպես ԼԳԲՏ համայնքի պաշտպան ներկայացնելն ու վարկաբեկելն է:

58 Yerevan. Today, Ինչո՞ւ պետք է ծերն իրավունք ունենա իմ հերոսին անպատվի ու մնա անպատիժ. Սրապիոնյան https://shorturl.at/nBEH8
59 Yerevan. Today, Նիկոլ Փաշինյանին Եվրոպայից շտապեցնում են՝ տրանսգենդերներին արտոնություններ տալ օրենքով https://shorturl.at/qEHST
60 Facebook.com, U.S. Embassy Yerevan, 09.062022-ին արված հրապարակում https://www.facebook.com/usembarmenia/posts/pfbid0NTs8x5kpUPxspD8mjvT4tdemumWfoMcApBxCsn6RTYapTP59AYLdkmeUJJvgNCSFl
61 «Հրապարակ». Հայաստանում ԱՄՆ դեսպանը հանդիպել է ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչների հետ https://hraparak.am/post/964ebe2d4065a41089a66a134e2e1998

Զուգահեռաբար, նույն հռետորաբանությունն ու մեթոդն են որդեգրել նաև իշխանական ուժերը, որոնք, տարածելով ընդդիմադիր «Հայաստան» դաշինքի՝ ԱՄՆ դեսպանատան հետ հանդիպման լուրը, փորձել են նույն կերպ շահարկել այն իրենց քաղաքական նպատակներով: Իշխանությանը սատարող լրատվամիջոցներում տարածված հոդվածում ասվում է. «... *Մենք իհարկե բավական անտարբեր ենք արևմտյան այս գունավոր փարթիի նկատմամբ, բայց որ ազգային արժեքների մասին ճոռոմ ելույթներ ունեցող քաղաքական ուժը կհանդիպեր ԼԳԲՏ հարցերով զբաղվող ԱՄԵՐԻԿԱՑԻ պաշտոնյայի հետ, չլսված բան է»*.[62] Հոդվածներում նաև ասվում է, թե ընդդիմության պահվածքը անհասկանալի է, քանի որ նրանք մի կողմից խոսում են ազգային արժեքների պահպանության մասին, մյուս կողմից՝ հանդիպում են ԼԳԲՏ անձանց պաշտպանող ամերիկացի պաշտոնյայի հետ:[63]

Այսինքն, ոչ միայն ընդդիմությունը, այլ նաև իշխանությունները, չեն խորշում տարածել մանիպուլատիվ տեղեկատվություն՝ ԼԳԲՏ համայնքին հակադրելով ազգային արժեքների հետ, և ԼԳԲՏ անձանց պաշտպանությունը ներկայացնելով որպես «ապազգային» ու բացասական երևույթ: Քաղաքական դաշտում, փաստորեն, երկու կողմից էլ նույն գործելաոճով փորձ է արվում քաղաքական դիվիդենտներ շահելու՝ առանց հաշվի առնելու, թե ինչպիսի մթնոլորտ է ձևավորվում հասարակության շրջանում ԼԳԲՏ անձանց նկատմամբ և թե ինչպիսի հետևանքներ կարող է ունենալ նման թշնամական տրամադրության սերմանումը:

Ատելության խոսքի մեկ այլ առիթ է հանդիսացել Օգանեզովան ընդդեմ Հայաստանի գործով ՄԻԵի վճռի հրապարակումը, որով, ինչպես նկարագրված է սույն զեկույցի «Պետության պարտավորությունները մարդու իրավունքների ապահովման և խտրականության կանխարգելման ուղղությամբ» բաժնում, դատարանը ճանաչել է Արմինե Օգանեզովայի իրավունքների խախտման փաստը իր սեռական կողմնորոշման պատճառով և պարտավորեցրել է պետությանը նրան փոխհատուցում վճարել: Այս կապակցությամբ տեղական և միջազգային լրատվամիջոցներում հոդվածներ են հրապարակվել, որոնք ստացել են վիրավորական մեկնաբանություններ. կրկին թիրախավորվել է տվյալ գործով տուժողը, ում անունն ու ինքնությունը հայտնի է հասարակության շրջանում: Այսինքն՝ անձը, որ շուրջ տաս տարի առաջ ատելության հիմքով հանցագործության զոհ է դարձել և չի ստացել արդյունավետ իրավական պաշտպանություն, ինչի պատճառով ստիպված է եղել լքել իր բնակության վայրը, կրկին ատելության խոսքի զոհ է դարձել այն պահին, երբ թվում է, թե պետք է ի վերջո իրավունքների վերականգնում գտներ:

Ոմն Վահե Եղիազարյան, **ով տեսանկարահանելով ուղիղ եթերում բռնություն է գործադրել տրանսգենդեր անձի նկատմամբ՝ զուգահեռաբար հնչեցնելով հայհոյանքներ և բռնության կոչեր,** ոչ միայն որևէ պատասխանատվության չի ենթարկվել, այլ նաև խրախուսման է արժանացել որոշ իրենց «ազգայնական» գաղափարախոսության կրողներ համարողների կողմից: Վահե Եղիազարյանը ուղիղ եթերում մասնավորապես ասել է. *«Ես հիմա պատրաստվում եմ երկու հոգու*

62 Ընդդիմության ներկայացուցիչները երեկ հանդիպել են ԼԳԲՏ հարցերով զբաղվող ամերիկացի պաշտոնյայի հետ, Medianews http://medianews.site/349204/; Pozitive-news https://bit.ly/3z1SSLb
63 media24, Իմ տրամաբանությունը վերջնականապես հայտնվեց փակուղում https://bit.ly/3ARicoN

ցբխեմ, ազնվությամբ, ուղիղ եթերով էլ ցբխելու եմ: Թող ոստիկանը գա տանի ինձի»:[64]

«Լույսի բանակ» անունը կրող կազմակերպությունը *«հայրենանվեր գործունեություն ծավալելու»* համար շնորհակալագիր է հանձնել Վահե Եղիազարյանին՝[65] խրախուսելով իր հետևորդներին հետևել վերջինիս օրինակին և բռնության ենթարկել տրանս անձանց: Նույն անունը կրող տելեգրամյան ալիքում տարածվել է տեսանյութը՝ հետևյալ գրառմամբ. *«Մեկ ժամ առաջ Մոսկվայից ժամանած մեր հայրենակից, Լույսի Բանակի բարեկամ, ԻՐԱԿԱՆ ՀԱՅ Վահեն, Երևանի սրտում սատկացրեց տրանսգենդերին: ... Այո, արարքը խրախուսելի է և ՀԱՅ ՏՂԱՄԱՐԴՈՒՆ վայել»:*

Տեսանյութի մեկնաբանություններում[66] տարբեր անձինք թողել են բռնության կոչեր և ատելություն պարունակող գրառումներ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«Ամբողջ Հայաստանը պիտի մաքրենք էտ աղբի տեսակից որ հայի անունը չիայտառակեն»:

«Դրանց բոլորին բոլոր իսկական հայերով պիտի լիկվիդացնենք բոլոր ձևերով ու եղանակներով: Քիչ ենք, բայց, եթե դրանք էլ են հաշվի մեջ, դա մեզ պետք չի, էդ որակը մեղ պետք չի»:

«Դրանց պետք է "արմատախիլ" անել , էդ մոլախոտերին: Անաստված արարածներ են : Ֆու ! Որտեղ ես տեսել հայ տղամարդը կին դառնա ? Բա դրանք "Հայ" կոչվելու, "մարդ" կոչվելու իրավունք ունեն ? Սատանայի ծառաներն են»:

Դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ՝ ֆիզիկական ներգործության և բռնության հրապարակային կոչերի կապակցությամբ:

Ատելության խոսքի նոր առիթ է հանդիսացել տրանսգենդեր անձանց պաշտպանությամբ զբաղվող «Իրավունքի կողմ» հասարակական կազմակերպության նոր գրասենյակի բացումը, որին մասնակցել է նաև ՀՀ Օմբուդսմեն Քրիստինե Գրիգորյանը, ով ևս թիրախավորվել է իր գործունեության պատճառով:

Անհանդուրժողականություն և ատելություն խոսք պարունակող հոդվածներ են տարածվել լրատվամիջոցներով: «Իրավունք» օրաթերթը գրել է. *Նիկոլ Փաշինյանի իշխանության գալուց հետո խորհրդանական ամբիոնից ելույթ ունեցած տրանսգենդեր* ***ԼԻԼԻԹ*** *կամ* ***ՎԱՂՈ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ*** *«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ի կողմից Երեւանում բացվել է նոր գրասենյակ, որը ո՛չ ավել, ո՛չ պակաս ապահովելու է տարածք՝ ԼԳԲՏՔ (Լեսբի, Գեյ, Բիսեքսուալ, Տրանսգենդեր, Տրանսսեքսուալ, Քվիր) տրանս համայնքի համար»:*[67]

«Նյուզ.էյէմ» կայքում հրապարակված հոդվածին, որը շեշտել է Քրիստինե Գրիգորյանի մասնակցությունը գրասենյակի բացմանը, արվել են հետևյալ մեկնաբանությունները.[68]

64 Telegram, ՍԱՏԿԱՑՐԵՑ ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ https://t.me/s/luysibanak/1868
65 Telegram, շնորհակալագիր Վահե Եղիազարյանին https://t.me/luysibanak/1872
66 Facebook.com, Barev Blog, Հլա մի հատ էլ ասում ա՝ հայ եմ...Ինչպես է Երևանում տղամարդը ծեծում տրանսսեքսուալի. Տեսանյութ - գրառման մեկնաբանությունները https://www.facebook.com/681835431995427/posts/pfbid0ZPx6G822FkU8tFseETej7YX4smegSfSe9tju9NeWS14ouUmtoYk3q2F3G3V8QTKAl/?d=n
67 Iravunk.com, Հայտնի տրանսգենդերը ԼԳԲՏՔ նոր գրասենյակ է բացել՝ ՄԻՊ-ի ու եվրոդեսպանների աջակցությամբ https://iravunk.com/?p=235264&l=am
68 Facebook.com, News.am, Երևանում ԼԳԲՏՔ տրանս համայնքի համար գրասենյակ է բացվել. ներկա է եղել Քրիստինե Գրիգորյանը, տե՛ս մեկնաբանությունները https://www.facebook.

«Ողբամ քեզ հայ ժողովուրդ, սրանց մի ստալինա պետք եւ 37թվական: այրվեք դուք դժոխքի կրակում»:

«Անասուններ, էս ինչ բերիք մեր գլխին: Ուր եք ուզում էդ այլասերվածությունը հասցնել: Ձեր նմանների քոքը կտրվի, սատկեք պրծնենք, ...»:

«Թող քրիստինեի բոլոր հնարավոր և անհնարին ժառանգները տրանս լինեն, ցնծա Հայոց աշխարհ բանը բանից անցել ա, տակը մնացել ա տրանսը ու դրանց բացած գրասենյակը, մեր երկրում այլևս որևէ արժեք անպիղծ չի»:

«Օրագիր նյուզ» լրատվականը փողոցում հարցում է անցկացրել՝ ստուգելու համար հասարակության վերաբերմունքը «իրավունքի կողմ» ՀԿ-ի նոր գրասենյակի բացմանը: *Հարցվողները հիմնականում բացասական են վերաբերվել նշված իրադարձությանը, նշելով, թե պետությունը այժմ անվտանգային լուրջ մարտահրավերների առաջ է կանգնած և այդ հարցերը չպետք է օրակարգում լինեն: Հարցման մասնակիցներից մեկն էլ նշել է, թե գեյերի համար սահման չի պահի:*[69]

«Լույս» տեղեկատվական կենտրոնի տնօրեն Հայկ Այվազյանը ևս անդրադարձել է գրասենյակի բացմանը, նշելով, թե ԼԳԲՏ անձանց պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունները քաղաքական գործիքներ են արևմուտքի ձեռքում և կապ չունեն այլ սեռական կողմնորոշում ունեցող անձանց հետ: Նաև նշել է, թե եթե բացմանը մասնակցում էր Քրիստինե Գրիգորյանը, ապա նշանակում է, որ դա պետական քաղաքականություն է, ասելով, թե եթե «ԴիԱյ Ուայ» ակումբը պայթեցնողները «լավ պրծան»՝ համաներման արժանանալով, ապա հիմա, նման արարք գործողը ազատազրկման կդատապարտվի:[70]

Այս քննարկման ընթացքում ևս իշխանության սատարողները իրենց մեթոդներում չեն զիջել ընդդիմադիրներին, ասելով, թե «ազգակործան» հորջորջված այդ կազմակերպությունները նախկին իշխանությունների օրոք են գրանցվել և գործունեություն ծավալել և որ պետք է հարցում անցկացնել և քաղաքացիներին հարցնել, թե ով է տեղյակ, որ Ռոբերտ Քոչարյանի կառավարման տարիներին է բացվել «Փինք» իրավապաշտպան կազմակերպությունը:[71]

Մանիպուլիացիաների և ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելության կոչերի տարածման առիթ է հանդիսացել ԱՄՆ կոնգրեսի խոսնակ Նենսի Փելոսիի այցը Հայաստան: Որոշ անձինք սոցիալական մեդիայով հրապարակումներ են տարածել, թե պետք չէ օգնություն ստանալ նույնասեռականների պաշտպաններից, քանի որ աստվածաշունչը չի ընդունում նույնասեռականություն և դա համարում է չարիք:[72]

---

com/136273049729218/posts/5843440012345798

69 Facebook.com, Oragir.news, Փողոցային հարցում https://fb.watch/kuqp2zQsqz/

70 Newspress.am, Տարիներ առաջ նման գրասենյակ մի խումբ երիտասարդներ վառել էին. Հայկ Այվազյանը՝ ԼԳԲՏ համայնքի գրասենյակի բացման մասին https://bit.ly/3g1JfVP

71 Facebook.com, Movses Harutyunyan օգտատիրոջ ֆեյսբուքյան գրառումը https://www.facebook.com/movses.harutyunyan.7/posts/pfbid024w9cLWpzQsVyfcyBJzQWTz3kqHTCFfrZGKmZtzakKJ3i99ztmoqDR8RZxuPdEny9l

72 Facebook.com, Բրոյան Ազո, ֆեյսբուքյան գրառում՝ Հլը տեսեք ովա եկել փրկի Հայաստանը https://shorturl.at/beIT8

Երիտասարդների ինքնասպանությունը և հանրային արձագանքը

2022 թ.-ի հոկտեմբերի 20-ին մեծ աղմուկ բարձրացրեց երկու երիտասարդների համատեղ ինքնասպանության դեպքը, ովքեր նախքան ինքնասպանություն գործելը իրենց ինստագրամյան էջում հրապարակել էին իրենց համատեղ լուսանկարները, որոնցում համբուրվում են, ցուցադրում իրենց «ամուսնական մատանիները»՝ կից գրառմամբ. «Happy End. Լուսանկարներով կիսվելու և մեր հետագա գործողությունների վերաբերյալ որոշումները կայացրել ենք համատեղ»: Դեպքի վերաբերյալ լուրերին հաջորդեցին երիտասարդների նկատմամբ սպառնալիքների վերաբերյալ լուրերը,[73] որոնց էլ հաջորդեցին ապատեղեկատվություն առ այն, թե երիտասարդները անչափահաս են եղել, կամ նրանցից մեկն է անչափահաս եղել և այլն:[74] Համացանցում բուռն քննարկում սկսվեց այն մասին, թե ինչն է երիտասարդներին ինքնասպանության հասցրել:

Այս շրջանում Հայաստանի Հանրային հեռուստաալիքով կազմակերպվեց բանավեճ-քննարկում դեպքի առնչությամբ, որին հրավիրվեց նաև Փինքը: Վերջինս, սակայն հրաժարվեց մասնակցել բանավեճին՝ հիմնավորելով, որ երիտասարդների ինքնասպանության դեպքը բանավեճի առիթ չպետք է լինի և որ կազմակերպությունը արդեն իսկ արտահայտել է իր դիրքորոշումն առ այն, որ հասարակության շրջանում նույնասեռականների նկատմամբ անհանդուրժողականությունը հերթական անգամ ողբերգական հետևանք է ունեցել, և որ կազմակերպությունն անընդունելի է համարում դեպքի որևէ շահարկում:

Ի վերջո, Հանրային հեռուստաընկերության «Լուրեր» ծրագրի «Տարբեր կարծիքներ Աստղիկ Սարգսյանի հետ» հաղորդման 24.10.2022 թ.-ի եթերում քննարկվեցին ԼԳԲՏ անձանց խնդիրները, նրանց ենթադրյալ ինքնասպանության դեպքերի իրավական, բարոյական, հոգեբանական կողմերը: Հաղորդման հյուրերն էին հոգեբան Իրինա Ծատուրյանը և Ազգային արժեքների պաշտպանության նախաձեռնության անդամ, փաստաբան, ՀՀ Փաստաբանների պալատի նախկին նախագահ Արա Զոհրաբյանը: Հանդես գալով որպես մասնագետ, ով աշխատում է ԼԳԲՏ անձանց հետ, հոգեբան Իրինա Ծատուրյանը հնչեցրել է հակագիտական պնդումներ, որոնք կարող են ոչ իրազեկ հասարակության շրջանում ձևավորել նախապաշարմունքներ ու սխալ պատկերացում նույնասեռականության շուրջ: Նա մասնավորապես նշել է, թե նույնասեռական կողմնորոշումն ընտրելիս անձինք

73 Epress.am, Ինքնասպանությունից առաջ սիրահարներին սպառնացել են https://epress.am/2022/10/21/a_t.html

74 https://hraparak.am/post/f300be8e3ba89efa45f385cb3c27c374 , https://24info.am/3147/, https://oragir.news/hy/material/2022/10/21/59782, https://bit.ly/3ZDZT0e, https://mediaroom.am/lrahos/item/40001-2022-10-21-19-21-31.html

պետք է պատրաստ լինեն հասարակության բացասական վերաբերմունքին:

Միջազգային բժշկական և հոգեբանական հանրությունը հանդես է եկել պաշտոնական դիրքորոշմամբ, որ նույնասեռական սեռական կողմնորոշումը և համապատասխան նույնասեռ հարաբերությունները հանդիսանում են մարդու սեռականության բնական տարատեսակներից և հորդորում է մասնագիտական հանրույթին չխթանել գիտական փաստերով չհիմնավորված ու թյուր պատկերացումներ սեռական կողմնորոշման վերաբերյալ և նպաստել խտրականության բացառմանը սեռական կողմնորոշման հիմքով:[75, 76] Գոյություն չունեն հիմնավոր և վստահելի գիտական փաստեր, որ մարդու սեռական կողմնորոշումը հնարավոր է փոխվել արտաքին գործոններով: Հետևաբար չկա որևէ գիտական հիմնավորում առ այն, որ նույնասեռ հարաբերությունների մասին տեղեկատվությունը բացասական ազդեցություն է թողնում երեխաների կամ դեռահասների հոգեկան առողջության վրա: Միջազգային հոգեբուժական ու հոգեբանական հանրույթը քննադատում է ցանկացած մասնագիտական փորձ՝ փոխելու անհատի սեռական կողմնորոշումը:[77] Այսինքն պնդումները, թե ԼԳԲՏ քարոզ է իրականացվում կամ տեղեկատվություն ստանալուց անձինք կարող են փոխել իրենց սեռական կողմնորոշումը, անհիմն են և հակագիտական: Հաղորդման հյուրը, փաստորեն, որպես իր խոսքով հոգեբան, ով աշխատում է ԼԳԲՏ համայնքի հետ, կարող է վնասել իր իսկ հաճախորդներին՝ նույնասեռականության վերաբերյալ իր պատկերացմամբ, եթե փորձ կատարի փոխելու կամ «ուղղելու» իր այցելուին, ինչը, բացի այն, որ ներգործություն է մարդու մասնավոր կյանքի նկատմամբ, միջամտության ինչ-որ աստիճանի դեպքում կարող է համարվել նաև անմարդկային վերաբերմունք:

Բացի այն, որ հարցազրույցն ամբողջությամբ պարունակում է հակագիտական, հրավիրյալների մասնագիտացման սկզբունքներից չբխող պնդումներ, Արա

75 World Medical Association (WMA). WMA STATEMENT ON NATURAL VARIATIONS OF HUMAN SEXUALITY (2013) https://www.wma.net/policies-post/wma-statement-on-natural-variations-of-human-sexuality/
76 World Psychiatric Association (WPA). WPA Position Statement on Gender Identity and Same-Sex Orientation, Attraction, and Behaviours (2016) https://www.wpanet.org/detail.php?section_id=7&content_id=1807
77 World Psychiatric Association. WPA Position Statement on Gender Identity and Same-Sex Orientation, Attraction, and Behaviours (2016). https://www.wpanet.org/detail.php?section_id=7&content_id=1807
The British Psychological Society. Position Statement Therapies Attempting to Change Sexual Orientation (2012) https://www1.bps.org.uk/system/files/Public%20files/thearpies_attempt.pdf
Canadian Psychological Association. CPA Policy Statement on Conversion/Reparative Therapy for Sexual Orientation (2015) https://www.cpa.ca/docs/File/Position/SOGII%20Policy%20Statement%20-%20LGB%20Conversion%20Therapy%20FINALAPPROVED2015.pdf
Australian Psychological Society. APS Position Statement on Psychological Practices that attempt to change Sexual Orientation (2015) https://www.psychology.org.au/getmedia/ebd486a2-761c-403c-bdef-406fda87dc4b/Position-Statement-Sexual-Orientation.pdf
Royal College of Psychiatrists' statement on sexual orientation (2014) https://www.rcpsych.ac.uk/pdf/PS02_2014.pdf
American Psychiatric Association. Position Statement on Therapies Focused on Attempts to Change Sexual Orientation (Reparative or Conversion Therapies) (2000) https://www.psychiatry.org/file%20library/about-apa/organization-documents-policies/policies/position-2000-therapies-change-sexual-orientation.pdf
American Psychological Association https://www.apa.org/about/policy/booklet.pdf
IPsyNet Statement on LGBTIQ+ Concerns (2018) https://www.apa.org/ipsynet/advocacy/policy/statement-english.pdf

Զոհրաբյանի կողմից հնչել է նաև արտահայտություն, որը կարող է որակվել որպես արժանապատվությունը նվաստացնող, ինչն էլ, ըստ էության, հանդիսանում է ատելության խոսք: Նա, մասնավորապես, տրանսգենդեր անձանց անվանել է «շեղված»:

Հարցին, թե ինչպես պետք է կանխվեն նմանատիպ ինքնասպանության դեպքերը, Արա Զոհրաբյանը նշել է, թե պետք է ունենալ առողջ ընտանիք, քանի որ առողջ ընտանիքում շեղումները հազվադեպ են լինում:

«Փինք» իրավապաշտպան ՀԿ-ն դիմել է Հանրային հեռուստաընկերության տնօրինությանը, մտահոգություն հայտնելով հաղորդման ընթացքում հակագիտական և ատելության խոսք պարունակող մտքերի շուրջ՝ խնդրելով հեռացնել հաղորդման տեսագրությունը կամ եթերաժամ տրամադրել խնդրի շուրջ գիտականորեն հիմնավորված, օբյեկտիվ տեսակետ ներկայացնելու համար:

Հանրային հեռուստաընկերությունը պատասխանել է, որ հաղորդման մասնակիցներն արտահայտել են իրենց սուբյեկտիվ կարծիքը, և որ այն ատելության խոսք չի պարունակում, հետևաբար, հիմք չկա հաղորդման տեսագրությունը հեռացնելու համար: Միևնույն ժամանակ, հեռուստաընկերությունը հայտնել է, որ, հաշվի առնելով եթերացանցի ծանրաբեռնվածությունը և թեմաների ընտրությունն ըստ արդիականության, օրակարգում այս թեմայի առկայության դեպքում առաջիկայում հարթակ կտրամադրվի Փինքի ներկայացուցչին:

«Փինք» իրավապաշտպան ՀԿ-ն դիմել է նաև ԶԼՄ-ների Էթիկայի Դիտորդ մարմնին՝ խնդրելով որակել Հանրային հեռուստաընկերության կողմից նման բովանդակությամբ հաղորդում հեռարձակելու համապատասխանությունը Էթիկայի սկզբունքներին:

Դիտորդ մարմնի եզրակացության համաձայն՝ այն, որ հաղորդման հյուրերը ունակ չէին միմյանց ընդդիմախոսել և ընդհանուր առմամբ նույն սուբյեկտիվ տեսակետն էին կիսում, թույլ չի տվել բազմակողմանի և խորը ներկայացնել խնդրի առարկան: Դիտորդ մարմինը սա համարել է Էթիկայի կանոնագրքի 1.4. և 1.5. դրույթների խախտում:

Էթիկայի մարմինը նշել է, որ հյուրերի կողմից նույնասեռականությունը «շեղում» անվանելը և սեռական կողմնորոշումը որպես անձի ընտրություն մեկնաբանելը պետք է համապատասխան շտկման կամ միջամտության արժանանար հաղորդավարի կողմից, ինչի բացակայությունը համարվում է կանոնագրքի 5.1. և 5.2. դրույթների խախտում:

Դիտորդ մարմինը, անդրադառնալով հեռուստաընկերության կողմից «Փինք» իրավապաշտպան ՀԿ-ին տրամադրվելիք եթերաժամանակին, շեշտել է, որ Էթիկայի կանոնակարգի դրույթներից է բխում հեռուստաընկերության կողմից ժամկետների և ձևաչափի առումով ավելի որոշակի պատասխան տալը:

«Փինք» իրավապաշտպան ՀԿ-ի երկրորդ նամակին առ այն, թե ինչ ձևաչափով և ինչ ժամկետում կարող է եթեր տրամադրվել, այդպես էլ որևէ պատասխան չի տրվել: Հանրային հեռուստաընկերությունը չի արձագանքել նաև Էթիկայի դիտորդ մարմնի եզրակացությանը՝ իր կողմից արձանագրված Էթիկայի խախտումների վերաբերյալ:

Լրացուցիչ մանիպուլյացիաների և ատելության խոսքի տարածման առիթ հանդիսացավ այն, որ Ռուսաստանի Դաշնության Պետական դուման երրորդ ընթերցմամբ ընդունեց Ռուսաստանում «ԼԳԲՏ քարոզչությունն» արգելող օրենք,[78] որով Ռուսաստանը արգելք է սահմանում լրատվամիջոցների, ինտերնետի, գովազդի, գրականության և կինոյի միջոցով «ոչ ավանդական հարաբերությունների քարոզչության» և մանկապղծության, ցանկացած տարիքի մարդկանց շրջանում «ԼԳԲՏ քարոզչության և երեխաների մոտ սեռը փոխելու ցանկություն առաջացնող տեղեկատվության» տարածման դեմ: Արգելք է սահմանվում բոլոր այն ֆիլմերի բաշխման վկայագրերի տրամադրման համար, որոնք նյութեր կպարունակեն «ոչ ավանդական սեռական հարաբերությունները խթանելու վերաբերյալ»:

Հայաստանյան սոցիալական ցանցերում նման օրենքի ընդունումը խրախուսվեց որոշ անձանց կողմից, ում արտահայտություններում ԼԳԲՏ անձինք կապվում են մանկապղծության հետ և դիտվում բացասական լույսի ներքո: Օգտատերերը մեկնաբանություններ են թողել, թե նման անձինք մարդ կոչվելու իրավունք չունեն, մարդկության ամոթն են և որ պետք է վտարվեն երկրից:[79] Իհարկե, օրենքի ընդունումը նաև քննադատվել է Հայաստանում՝ որպես ակտիվիստների և իրավապաշտպանների նկատմամբ ճնշումների մեխանիզմ:



Սոցիալական ցանցերում աղմուկ բարձրացրեց նաև դասագրքերի հեղինակ Դավիթ Գասպարյանի հետ հարցազրույցը,[80] որտեղ նա պնդում էր, որ «Գրականություն» առարկայի 7-րդ դասարանի դասագրքում երկու աղջիկ համբուրվում են և դրա ցուցադրումը հասունացման շրջանում գտնվող երեխաներին անընդունելի է: Հարցազրույցի մեկնաբանություններում անձինք կոչ են արել ծնողներին համախմբվել և պահանջել «հայեցի» դաստիարակություն: Այնուհետև պարզվել է, որ նկարը Մարտիրոս Սարյանի «Սեր: Հեքիաթ» նկարն է, որտեղ պատկերված են կին ու տղամարդ: Այս մասին սկզբում հայտարարեց «Փաստերի ստուգման հարթակը»,[81] այնուհետև խոսեց նաև Սարյանի տուն-թանգարանի գլխավոր ֆոնդապահ և նկարչի թոռնուհի Սոֆյա Սարյանը,[82] որից հետո էլ չդադարեցին քննադատությունները՝ ասելով, թե նկարում պատկերված տղամարդը երկար մազեր ունի, ինչը կարող է շփոթեցնել 13-ամյա աշակերտներին:

78 Telegram, Официальный канал агентства ТАСС, Дума приняла закон о запрете пропаганды ЛГБТ https://t.me/tass_agency/168124
79 Facebook.com, Radio Aurora հրապարակման մեկնաբանությունները https://www.facebook.com/RadioAurora/posts/5695316160556786
80 Hraparak.am, 7-րդ դասարանի փորձարկվող դասագրքերից մեկում երկու աղջիկ համբուրվում են https://hraparak.am/post/70de0b8b6a5977e804d0b0f2e3721c8d
81 Fip.am, 7-րդ դասարանի փորձարկվող դասագրքում Սարյանի կտավն է, որում համբուրվողները ոչ թե կանայք են, այլ կին ու տղամարդ https://fip.am/21166
82 Vnews.am, Սարյանի «հակաթանգարանային» շարքը https://www.vnews.am/culture/post/saryani-hakathangaranayin-sharqy

Այս պատրվակով ևս թիրախավորվել է գործող իշխանությունը՝ վերջինիս կողմից պատրաստված դասագիրքը կապելով նույնասեռականության «քարոզչության» հետ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2022 թ.-ի ընթացքում ԼԳԲՏ անձանց նկատմամբ հրապարակային բռնության կոչերի դեպքեր քիչ են արձանագրվել, ինչը մի կողմից պայմանավորված է պետության առջև ծառացած լուրջ մարտահրավերներով, որը փոխել է քաղաքական օրակարգային հարցերը, իսկ մյուս կողմից նաև քրեական օրենսգրքում բռնության հրապարակային կոչերի համար պատասխանատվության սահմանմամբ: Իհարկե, դեռևս հնարավոր չէ պնդել, թե քրեական օրենսգիրքը արդյունավետ կերպով գործում է սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով ատելության խոսքի կանխարգելման և պատասխանատվության համար, սակայն, փաստ է այն, որ ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելություն և անհանդուրժողականություն սերմանող շատ ուժեր դադարել են բռնության կոչեր հնչեցնել հատկապես վերջին տարիներին՝ քրեական օրենսգրքի լրացումից ի վեր: Հատկանշական է, որ ի տարբերություն նախորդ տարիների, ատելության խոսքի լուրջ, ծանր դրսևորումներ ազդեցիկ քաղաքական գործիչների կողմից չեն արձանագրվել: Այնուամենայնիվ, ատելության խոսքի այնպիսի ծանր դրսևորումների համար, ինչպիսին է բռնության կոչը, դեռևս արդյունավետ դատաքննություն չի իրականացվել: Որոշ գործեր դեռևս գտնվում են քննության փուլում, իսկ մեկ գործով նախապատրաստվում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանին ուղղված դիմում:

Ընդդիմադիր քաղաքական ուժերի կողմից տարածվող մանիպուլյացիաները, որոնց արդյունքում թիրախավորվում են ԼԳԲՏ անձինք, իհարկե, իրենց բացասական ազդեցությունն ունեն հասարակության տրամադրության և ԼԳԲՏ անձանց նկատմամբ վերաբերմունքի վրա, քանի որ այդ ուժերի ներկայացուցիչները ունեն իրենց լսարանը և լրատվական հոսքեր ստեղծելու բավականին մեծ ռեսուրս: Ներկայացված լինելով Ազգային ժողովում՝ նրանք օգտագործում են նաև իրենց պաշտոնական դիրքը՝ առավել լայն լսարանի հասցնելու իրենց խոսքն ու գաղափարները: Ելնելով Ազգային ժողովում ներկայացվածության համամասնությունից՝ կարելի է եզրակացնել, որ ընդդիմադիր ուժերի աջակիցները հասարակության շրջանում առավել քիչ են, ինչը նվազեցնում է իրենց խոսքի ազդեցությունը, սակայն, միևնույն ժամանակ, իշխանությանը ԼԳԲՏ անձանց հետ կապելով, նրանք փորձ են անում իրենց հակադրել այսպես կոչված «ապազգային» երևույթների հետ և շահել հասարակության համակրանքը:

Այնուամենայնիվ, ընդդիմության կողմից տարածվող լուրերն ու շահարկումները նվազ խնդրահարույց են, քան իշխանամերձ մարմինների կողմից տարածվողները, քանի որ, նախ իշխանություններն ունեն առավել լայն լսարան և հասարակության շրջանում առավել մեծ համակրանք, և մյուս կողմից ԼԳԲՏ անձանց պաշտպանելու պարտավորությունը դրված է հենց իշխող քաղաքական ուժի ուսերին, ինչը ճանաչված է թե՛ ՀՀ Սահմանադրությամբ, թե՛ ՀՀ-ի կողմից վավերացված միջազգային փաստաթղթերով: Իշխող ուժերը, ստանձնելով պետության ղեկավարումը, պետք է հաշվի առնեն, որ ի պաշտոնե ստանձնել են պարտավորություն ոչ միայն ձեռնպահ մնալու մարդու իրավունքների խախտումներից, այլ նաև պաշտպանելու յուրաքանչյուրին, ով գտնվում է տվյալ պետության տարածքում: Այս պարագայում իշխանության ներկայացուցիչները մարդու իրավունքները պաշտպանելու նպատակով պետք է նաև ձեռնամուխ լինեն հավասարության և հանդուրժողականության մշակույթի սերմանմանը, սակայն մենք ականատեսն ենք լինում ճիշտ հակառակին: Իշխող քաղաքական ուժը իրեն հասանելի միջոցներով ոչ թե հանդես է գալիս որպես հասարակության շրջանում ներդաշնակություն, հանդուրժողականություն և հավասարություն

ապահովող մարմին, այլ ինքն էլ ուղղակիորեն բացասական լույսի ներքո է ներկայացնում ԼԳԲՏ համայնքը՝ իր քաղաքական շահերից ելնելով:

Նոր քրեական օրենսգրքի ընդունումը մի կողմից հուսադրող է այն առումով, որ այժմ ֆիզիկական բռնության այս գործողությունները կարող են դիտարկվել ոչ թե որպես պարզապես ծեծ, այլ ֆիզիկական ներգործություն, ինչը հանգեցնում է առավել ծանր պատժի, եթե կատարվել է տուժողի անձնական հատկանիշով պայմանավորված ատելության շարժառիթով: Մյուս կողմից, Մարդու իրավունք-ների եվրոպական դատարանի՝ Օգանեզովան ընդդեմ Հայաստանի գործով վճռի կատարումը ևս ենթադրում է ատելության շարժառիթով կատարվող հանցագործությունների պատշաճ քննություն, ինչը պետք է նախ և առաջ տեղ գտնի որոշում կայացնողների օրակարգում և պետական քաղաքականության մեջ: Այս առնչությամբ պետությունը իր կողմից ձեռնարկված միջոցառումների մասով պատասխանատու է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեին: Հետևաբար, հարկ է մշտադիտարկում իրականացնել նմանատիպ գործերի քննության ընթացքի նկատմամբ և պարբերաբար վերլուծել գործնական առկա փոփոխությունները:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԼԳԲՏ անձանց իրավունքների առավելագույն պաշտպանությունը ՀՀ-ում ապահովելու համար առաջարկում ենք.

Պետական մարմիններին և քաղաքական ուժերին

- Համագործակցել իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների հետ՝ ստանալու համար առավել մանրակրկիտ տեղեկություն ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների ոտնահարումների համակարգային բնույթ կրող ասպեկտների մասին:
- Հանրային կյանքի տարբեր ոլորտներում սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականությունն ու բռնությունը կանխելու ուղղությամբ քայլեր նախատեսել Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող գործողությունների պլանում:
- ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների ոտնահարումներին անդրադառնալիս տալ հստակ գնահատականներ, չխուսափել մարդու իրավունքների ոտնահարումները դատապարտելուց:
- Իրականացնել մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերի, միջազգային իրավական փորձի համապարփակ ուսումնասիրություն և երկրում առկա իրավիճակի վերլուծություն՝ նախատեսելու համար ատելության խոսքի՝ մարդու իրավունքների սկզբունքներին համապատասխան և գործուն իրավակարգավորումներ:
- Վերանայել ատելության խոսքն արգելող ՀՀ օրենսդրությունը, սահմանել «ատելության խոսք» հասկացությունը, պատասխանատվություն սահմանել որոշակի հատկանիշներով օժտված անձանց, ներառյալ՝ ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելություն, անհանդուրժողականություն սերմանող խոսքի համար:
- Ընդունել խտրականությունը կանխարգելող, ինչպես նաև արգելող քաղաքացիական, վարչական և քրեական պատասխանատվություն սահմանող առանձին համապարփակ օրենսդրություն, որը կապահովի խտրականությունից պաշտպանված լինելու անձի իրավունքը նաև սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով:
- Վերանայել ատելության հիմքով հանցագործություններն արգելող ՀՀ օրենսդրությունը, մասնավորապես՝ նախատեսել անձի նկատմամբ սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության շարժառիթով կատարված հանցագործությունը՝ որպես քրեական պատիժը և պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք:
- Իրականացնել իրավակիրառ մարմինների վերապատրաստում սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով կատարված հանցագործությունների քննության նյութաիրավական և ընթացակարգային առանձնահատկությունների շուրջ՝ ապահովելու համար ամբողջական, օբյեկտիվ և բազմակողմանի քննություն:
- Փաստագրել և վարել ՀՀ-ում ատելության հիմքով հանցագործությունների,

ներառյալ՝ անձի սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության շարժառիթով կատարված հանցագործությունների վիճակագրություն՝ տեսանելի դարձնելով ատելության հիմքով հանցագործությունների խնդիրը ՀՀ-ում:

- Ապահովել արդարադատության մատչելիությունը ատելության հիմքով հանցագործություններից տուժած անձանց համար, մասնավորապես, նախատեսելով անձի իրավունքների պաշտպանության արդյունավետ մեխանիզմներ, որոնք կբացառեն անձի կրկնազոհացման վտանգը, կապահովեն անձի անվտանգությունը և կնախատեսեն վնասների հատուցման համընդգրկուն մեխանիզմներ:
- Կազմակերպել և իրականացնել դասընթացներ իրավակիրառ մարմինների հետ՝ ատելության հիմքով հանցագործությունների զոհերի և վկաների հետ աշխատանքի առանձնահատկությունների վերաբերյալ:
- Խթանել հանդուրժողականության, հավասարության գաղափարներ պետական մարմինների ծառայողների, մասնավորապես՝ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների, ՀՀ Կառավարության ներկայացուցիչների և պաշտոնատար այլ անձանց շրջանում:
- Խթանել հանդուրժողականության, հավասարության գաղափարները հասարակությունում, մասնավորապես՝ հրապարակայնորեն հանդես գալ հանդուրժողականություն սերմանող հայտարարություններով և դատապարտել բռնության և անհանդուրժողականության որևէ դրսևորում:

Զանգվածային լրատվության միջոցներին

- Դադարեցնել ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելություն և անհանդուրժողականություն սերմանող հրապարակումները՝ հասարակությանը մատուցելով գրագետ, էթիկապես ընդունելի և ԼԳԲՏ մարդու իրավունքների նկատմամբ հարգանք սերմանող նյութեր:
- Չշահարկել ԼԳԲՏ անձանց առնչվող ցանկացած թեմա՝ զերծ մնալով հասարակության մեջ անհարկի անհանդուրժողականություն և ատելություն սերմանելուց:
- Չտարածել պաշտոնատար անձանց և այլ գործիչների կողմից հնչած ատելություն, անհանդուրժողականություն, թշնամանք, բռնության կամ խտրականության կոչ կամ արդարացում պարունակող խոսքը:

Միջազգային և տարածաշրջանային կազմակերպություններին

- Պատշաճ կերպով վերահսկել Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած ԼԳԲՏ անձանց իրավունքների վերաբերյալ միջազգային պարտավորությունների կատարման գործընթացը:

- Հանդես գալ պաշտոնական հայտարարություններով՝ ի աջակցումն ՀՀ-ում ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանության կարևորության և առաջնայնության:
- Մարդու իրավունքներին առնչվող իրենց զեկույցներում անդրադառնալ սույն զեկույցում բարձրացված ԼԳԲՏ անձանց իրավունքների խախտումների ձևավորված պրակտիկային:

Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին

- Բարձրացնել հասարակության տեղեկացվածության մակարդակը ԼԳԲՏ անձանց նկատմամբ խտրականության և դրանից բխող բացասական հետևանքների մասին, խտրականության բացառման կարևորության և հավասարության սկզբունքների վերաբերյալ:
- Բարձրացնել հասարակության տեղեկացվածությունը ատելության խոսքի և դրա քարոզչության հակաօրինականության մասին:
- Իրականացնել ջատագովություն Իրավահավասարության մասին արդյունավետ օրենք մշակելու և ընդունելու, ինչպես նաև՝ այլ իրավական փաստաթղթերում ԼԳԲՏ անձանց համար իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ սահմանելու համար:
- ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների ոտնահարումների հայտնի դեպքերում հանդես գալ հրապարակային դատապարտող հայտարարությամբ, պատշաճ արձագանքել ահազանգերին:

Կազմակերպության մասին

«Փինք» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 2007 թ.-ին: Կազմակերպությունն իր շահառուներին և հասարակությանն առավել հայտնի է որպես Փինք Արմենիա: Փինքը ԼԳԲՏ (լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր) համայնքահեն կազմակերպություն է, ինչը նշանակում է, որ կազմակերպությունը ստեղծվել է ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչների կողմից, ծառայում և աջակցում է համայնքի կարիքներին, ինչպես նաև խթանում է ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների պաշտպանության գործընթացը ու ջատագովում ԼԳԲՏ հարցերի շուրջ հանրային քաղաքականության փոփոխությանը:

«Փինք» իրավապաշտպան
հասարակական կազմակերպություն

www.pinkarmenia.org
info@pinkarmenia.org
+374 60 377277